

1(694)
2024

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

ԼՍԱՐԱՐ

Ճանաչել գիտնականին եւ գիտնականին ճանաչել

Lycapap

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

ՈԳԵՂԵՆ ԼՈՒՅՍԵՐԻ ՎԵՐԱԾԵՆՈՒՆԴ

«Լուսարար»-ը կրկին լույս է տեսնում, այս անգամ արդեն՝ Երևանում: Եթե հայ մամուլի պատմության դիտարկումից գնահատենք, ապա դա կարծես նորմալ է, որովհետև մի շարք պարբերականներ հրատարակության տարբեր տարեթվեր ու շախարհագրություն են ունեցել: «Հայկական աշխարհ» թերթը, օրինակ, ընդհատումներով հրատարակվել է Թիֆլիսում, Շուշիում, Գանձակում, Բաքվում, Երևանում: Ի դեպ, այս տարի լույս է հիշյալ պարբերականի Շուշիում լույս ընծայման 150-ամյակը, և լավ առիթ է, թեկուզ Երևանում նշել այդ հիշարժան հոբելյանը: Մեկուկեսդարյա մամուլի գոյության փաստը Արցախի հայապատկանության լուրջ կոպաներից է:

«Լուսարար»-ը, որը շուրջ 23 տարի Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հրատարակային ամբիոնն էր (հատկանշաբար՝ Արցախում երկու տասնամյակ շարունակ այն եղել է ամենամեծ բաժանորդական լսարանն ունեցող թերթը), այժմ լույս է տեսնում Երևանում՝ տարեկան գրանցում ստացած «Լուսարար» կրթամշակութային հասարակական կազմակերպության միջոցով: Հույս ունենք, որ դա ժամանակավոր է, և ոչ հեռու ապագայում «Լուսարար»-ը նորից լույս կտեսնի Ստեփանակերտում՝ որպես Արցախի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության պաշտոնաթերթ:

Նախածեռնելով «Լուսարար»-ի հրատարակումը Երևանում՝ մենք նպատակ ենք ունենցել պահպանել այն լավագույն ավանդույթները, որոնք ձեռք են բերվել խմբագրակազմի ու թղթակցային ակտիվի համատեղ ջանքերով: Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառներում ունեցած նվաճումները (իսկ դրանք բավականին շատ են եղել Արցախում) լայնորեն լուսաբանվել են թերթի էջերում: Այդ ձեռքբերումները չարժանաբեր, առավել ևս մոռանալու իրավունքը մենք չունենք: Մեր նպատակն է նաև համախմբել իրենց մասնագիտական ոլորտում գործունեություն իրականացնող արցախցի անվանի ուսուցիչներին, արվեստագետներին, մարզիկներին, գիտական աշխարհի ներկայացուցիչներին, արձագանքել նրանց բարձրացրած հարցերին և, անշուշտ, արթուն պահել չկորսված հայրենիքի հանդեպ սերն ու վերադարձի հավատը:

Ինչպես նախկինում, «Լուսարար»-ն իր նոր կարգավիճակով դարձյալ լինելու է վստահելի գրուցակից ու հանրամատչելի ամբիոն: Մենք ակնկալում ենք ակտիվ թղթակցություն մեր հայրենակիցների կողմից, հատկապես որ բացի թղթային տարբերակով հրատարակումից, «Լուսարար»-ն ունենալու է իր էլեկտրոնային տարբերակը, այդ թվում՝ ֆեյսբուքյան էջը: Դժվար առաքելություն ենք ստանձնում, հարկավ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ խմբագրակազմը փոքր է, անելիքները՝ շատ, էլ չենք խոսում նյութական փոխհատուցման սակավությունից: Այդով հանդերձ, չենք կարող մեր երախտագիտության խոսքը չասել «Vahe Fattal Fund»-ին, ի մասնավորի՝ ֆրանսահայ բարերար պարոն Երվանդ Նահիկյանին, որի նվիրատվության շնորհիվ է վերածնվել թերթը: «Լուսարար»-ի ոգեղեն լույսերն անպայման ձգվելու են առ Արցախ՝ մեր պայքարական օջախներին վերստին լույս ու ջերմություն տալու:

Հաջողություն բոլոր հայրենասիրական նախածեռնություններին:

Նովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ



Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռվում
Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն է թափառում,
Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում են դեպի քեզ՝
Մղկտում է սիրտս անվերջ քո թառանջից աղեկեզ,
Ու գաղթական զավակներիդ լուռ շարքերից ուժասպառ,
Եվ գյուղերից, և շենքերից՝ տխուր, դատարկ ու խավար,
Ձարկված հայրենիք,
Ջրկված հայրենիք:

Խնկում են մտքիս հանդեպ բանակները անհամար,
Տրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ,
Ու ջարդարար ոհմակների աղաղակով վայրենի,
Ավարներով, ավերներով, խրճուղներով արյունի,
Որ դարձրին քեզ մշտական սև ու սուգի մի հովիտ,
Խեղճ ու լալկան քո երգերով, հայացքներով անժպիտ,
Ողբի՝ հայրենիք,
Որբի՝ հայրենիք:

Բայց հին ու նոր քո վերբերով կանգնած ես դու կենդանի,
Կանգնած խոհուն, խորհրդավոր ճամփին նորի ու հընի,
Հառաչանքով սրտի խորքից խոսք ես խոսում Աստծու հետ
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղետ,
Խորհում ես դու է՛ն մեծ խոսքը, որ պիտ ասես աշխարհին
Ու պիտ դառնաս է՛ն երկիրը, ուր ծրգտում է մեր հոգին-
Հույսի՝ հայրենիք,
Լույսի՝ հայրենիք:

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,
Հագած իր-հագար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,
Կենսաժղպիտ իր շողերը պիտի ժպտան առաջին,
Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անձեռով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,
Իմ նո՛ր հայրենիք,
Հոգ՛ր հայրենիք...

ՆՊԱՏԱԿԸ ԱՐՅԱՆԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ Ե



«Լուսարար»-ի վերահրատարակումը հնարավոր է դարձել ԱԳ ԿԳՄՍ նախկին նախարար, ներկայումս Հոփի. Թումանյանի թանգարանի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լուսինե ՂԱՐԱՄԱՆՅԱՆԻ անմիջական ջանքերի շնորհիվ, ինչի համար հայտնում ենք մեր երախտագիտությունը: Այս և հարակից հարցերի շուրջ «Լուսարար»-ը գրույցի հրավիրեց Լ. Ղարախանյանին:

- Տիկին Ղարախանյան, Արցախում «Լուսարար»-ի առաքելության մասին բոլորս գիտեինք: Ստեղծված նոր պայմաններում ինչպե՞ս եք պատկերացնում նրա դերը:

- Արցախից բռնի տեղահանվելուց և Հայաստան գալուց հետո մինչև հիմա չի եղել հոգևոր որևէ ազդակ, մի հորդոր, հաղորդագրություն որևէ պետական պաշտոնյայի կողմից, որը կմեկտեղեր մեր հոգևոր, ինտելեկտուալ և բարոյական ուժերը: Եվ «Լուսարար»-ի վերածնունդը ինձ համար թերևս մեր հոգևոր վերածննդի առաջին ազդանշանն է: Պատկերացրեք, սա Արցախի կորուստը սփոփելու, (չնայած սփոփել չի լինի) առաջին լույսն է: Այն գործառնություն, որ «Լուսարար»-ը ունի Արցախի կրթամշակութային կյանքում, այստեղ լրիվ նոր մշակութային և խորհրդանշան է ունենալու: Այն մեզ դարձնելու է կենսունակ, ու մենք սկսելու ենք արդեն տեսնել մեր ապագան և վերջապես տեղից շարժվելու ենք: Ես պատկերացնում եմ, որ շատ ուսուցիչներ, մտավորականներ կթղթակցեն, և «Լուսարար»-ի միջոցով մենք կտեսնենք մեր քարտեզը, թե մեզմից ով որտեղ է: Եվ մենք նաև այդպես կսփոփվենք, այդպես կլիզենք մեր վերբերը և այդպես կուրվագծենք նաև մեր

վերադարձը: Ես շատ ուրախ եմ և հպարտ, որ մի փոքր ներդրում ունեցա «Լուսարար»-ի վերածննդի գործում, որովհետև «Լուսարար»-ն ինձ համար եղել է, եթե այսպես կարելի է ասել, իմ կրթական-լուսավորչական և հոգևոր զարգացման կենտրոնը: «Լուսարար»-ով եմ ես բացել ինձ համար Արցախի կրթական տարածքը: Եվ միշտ խանդավառվել եմ, երբ տեսել եմ, որ իմ հողվածը լույս է տեսել նրա էջերում. ուրեմն խմբագիրը հավանել է: Այդպես «Լուսարար»-ն ինձ համար եղել է իմ հոգեբանական պաշտպանական մեխանիզմը:

Ընդհանրապես, երբ մարդ թանկ կորուստ է ունենում, հոգին կիսադատարկվում է: Հիմա մենք ամենաթանկը՝ հայրենիք ենք կորցրել և լրիվ դատարկություն ենք զգում մեր ներքին: Կարիք կա, որ մեզը համախմբի, կոչ անի ժողովրդին, հարթակներ լինեն, որտեղ մարդիկ իրար հետ հանդիպեն, կիսվեն, թեթևանան, և այդպես ինչ-որ չափով մեր ներսի դատարկությունը լցվի: Մինչ այս բռնատեղահանությունը գիտեինք որ պայքարում ենք, կարևոր գործ ենք անում, և դա մեզ ապրեցնում էր: Մեր միջին հանեցին այդ պայքարի ոգին, և դատարկվեցին:

- Ինչպե՞ս արթնացնենք այդ կրակը:
- Դիմադրողական շարժում է պետք: Ես չեմ պատկերացրել, որ Արցախի հայաթափումից հետո որևէ լուրջ դիմադրողական շարժում չի լինի Հայաստանում նույնիսկ հոգևոր դաշտում: Չկա այդ շարժումը, և դա շատ վատ է: Այդ շարժումը պետք է իրականացնեն առաջին դեմքերը: Ոչ թե դուրս գան հրապարակ, ինչ-որ ցույցեր անեն, ոչ, ես այդ մասին չեմ խոսում, այլ ցույց տան, որ մենք միասին ենք, մենք չենք հրաժարվում Արցախից և աշխարհաքաղաքական հարմար պահի մենք հետ ենք գնալու: Նպատակն է «Լուսարար»-ի վերածննդին՝ ես իմ առաջին քայլը կատարեցի այն մտայնությունից հրաժարվելու, որ Արցախն այլևս չկա:

մինչև հիմա արցախահայերի մոտ ինչ է արձանագրվել: Մենք ունենք վիճակագրական պատկեր, թե հոգեկան խնդիր ունեցող քանի երեխա կա: Քանի՞ չափահաս է հոգեկան ցնցում ստացել, քանի՞ սն է դիմել հոգեբանական աջակցության համար: Ավելին, եթե միջին շրջակայքում միջ սկսած, որոնք պետք է փաստագրվեն և աշխատանք սկսվի միջազգային համապատասխան կառույցների հետ: Սրանք բոլորը գենքեր են, որով պետք է մեր պայքարը շարունակենք: Եվ այս պարագայում «Լուսարար»-ը նաև դառնալու է մարդկանց մտահոգությունները կիսելու հրաշալի ասպարեզ: Այն կարող է դառնալ նաև պայքարի ասպարեզ, պայքարի դաշտ և պայքարի խրամատ:

Մեր դիմադրողականության մակարդակը «Լուսարար»-ով բարձրանալու է, որովհետև հոգևոր, ինտելեկտուալ, բարոյական պատկերները, մեր վիճակը «Լուսարար»-ում միշտ արտացոլվել են և կշարունակի արտացոլվել: Օրերս մի շատ հետաքրքիր միտք եմ լսել. լուսահոգի հոգեբան Սերգեյ Արզումանյանն ասում էր, որ Ղարաբաղը ոչ թե բնակավայր է և լանդշաֆտ, այլ Ղարաբաղը հոգեվիճակ է: Այս հոգեվիճակը պետք է վերականգնվի: Եվ նաև «Լուսարար»-ով է վերականգնվելու:

- Դուք նշեցիք դիմադրողականության վերականգնման անհրաժեշտությունը: Ցավալի խորեն արցախյան դեռևս լեզուի միջոցով մեր կողմից մենք դա չենք տեսնում, որի քաղաքական պատճառները թերևս հասկանալի են: Փոխարենը նկատում ենք արցախյան հասարակական կազմակերպությունների վերստեղծման կամ նորերի ստեղծման ակտիվ նախածեռնություններ: ՀԿ-ների աշխուժացումը կարո՞ղ է դիմադրողական անհրաժեշտ ներուժ ձևավորել, դա բավարար է վերադարձի հոգեբանության ամրապնդման համար:

- ՀԿ-ների ստեղծման գործընթացը և տարբերային է: Այստեղ ևս պետք է լինի ուղղորդող և համակարգող աշխատանք: Այստեղ ևս մենք տրոհվում ենք: Օրինակ, մշակութային կազմակերպությունները պետք է միավորվեն մեկ կազմակերպության մեջ, կրթականը՝ մեկ և այլպես շարունակ: Պետք է ստեղծվի հասարակական կազմակերպությունների ինստիտուցիոնալ երանգ ունեցող համակարգ, որն ունենա Արցախ վերադարձի նույն գաղափարախոսությունն ու տեսլականը, աշխատանքային պլանն ու գործունեությունը:

ՄԵՑ ՆԱՅԵՐ

«ԼՈՒՍԱՐԱՐ»-Ի ՄԵԾԱՆՈՒԳԻ ԲԱՐԵՐԱՐԸ



չում ունի արցախցիների մոտ: Այդ գիրքը թարգմանվել է բազմաթիվ լեզուներով, իսկ գրքի սյուժեի հիման վրա Իտալիայում նկարահանվել է գեղարվեստական ֆիլմ:

1915 թվականի Հայոց ցեղասպանության ժամանակ Երվանդի պապը՝ դոկտոր Նիշան Նահիկյանը, ծերբակալվել է մյուս հայ բժիշկների, սպաների և մտավորականների հետ: Կանխատեսելով իրենց ճակատագիրը՝ նրանք որոշեցին իրկիզել այն բանտը, որտեղ իրենց կալանավորել էին: Նրանք բոլորն էլ մահացել կամ սպանվել են այս ողբերգական իրադարձության ժամանակ: Նույն ժամանակահատվածում սպանվել է նրա կինը, Արսլանյան չորս եղբայրները՝ ընտանիքի մի քանի այլ անդամների հետ:

Երվանդի տատը՝ Վերոն Արսլանյանը, վերապրեց այդ ողբերգությունն ու այլ կանանց և երեխաների հետ անցավ անապատի երկար ու դժվարին գաղթի ճանապարհը: Նրանցից շատերը սպանվեցին: Վերոնը գրկած տանում էր երկամյա որդուն՝ Վահրամին՝ Երվանդի հորը, մինչդեռ նրա երկվորյակ դուստրերը չկարողացան դիմանալ այդ ծանր փորձությանը: Վերոնը և որդին հրաշքով հասել են Սիրիա և փրկվել նրա եղբայրների՝ Ջարեհի և Ռուբենի շնորհիվ, որոնք երկուսն էլ Հայկազուն կայացած բժիշկներ էին: Նրա ավագ եղբայրը՝ պրոֆ. դոկտոր Երվանդ Արսլանյանը, արդեն ապրում էր Իտալիայի Պադովա քաղաքում: Երեք եղբայրն էլ ստանձնեցին որբացած զարմիկների խնամքը, որոնք ողջ էին մնացել և հետագայում միացել էին նրանց:

Վահրամ Նահիկյանը հետագայում Դամասկոսից տեղափոխվեց Բեյրութ՝ ճիզվիտական համալսարանում բարձրագույն կրթություն ստանալու: Այնտեղ նա դարձավ ինժեներ/ճարտարապետ և իր ողջ կարիերայի ընթացքում հիմնականում նախագծեց և կառուցեց դպրոցներ ու հիվանդանոցներ: Նա նաև ինժեներ էր և պատասխանատու էր ֆրանսիական կառավարության սեփականության համար, ինչպես ֆրանսիական իշխանության ժամանակ, այնպես էլ Լիբանանի անկախացումից հետո: Նա ամուսնացավ հալեպցի Շաքե Մինասյանի՝ Երվանդի մոր հետ, և նրանք ունեցան երեք երեխա՝ մեկը ինժեներ/արդյունաբերող, երկրորդը՝ ճարտարապետ, երրորդը՝ լանդշաֆտային ճարտարապետ: Երեք ընտանիքներն էլ ներկայումս ապրում են Միացյալ Նահանգներում:

Երվանդ Նահիկյանը ծնվել է մեծացել է Բեյրութում: Նախնական կրթությունն ստացել է «Նիշան Փալանճյան» ճեմարանում, ապա՝ ճիզվիտական «Նոտր Դամ» վարժարանում: Հետագայում նա ավարտել է «Լիբանանի Գեղարվեստի ակադեմիա» («Academie Libanaise des Beaux-Arts») ճարտարապետական դպրոցը, որից հետո ասպիրանտական կրթություն ստացել Փարիզի Գեղարվեստի ազգային բարձրագույն դպրոցում («Ecole Nationale Superieure des Beaux-Arts»), որտեղ էլ ստացել է DPLG ճարտարապետի որակավորում:

Լիբանան վերադառնալուց հետո Երվանդը հիմնեց իր սեփական ճարտարապետական ընկերությունը՝ իրականացնելով նախագծեր Երեւանի Արևելքում, Աֆրիկայում, Ֆրանսիայում և Միացյալ Նահանգներում: Նա նաև ճարտարապետություն և քաղաքային ինտեգրացիա է դասավանդել ասպիրանտուրայում՝ հիմք դնելով լիբանանյան քաղաքացիական պատերազմին հաջորդած առաջիկա համաձայնեցված վերակառուցման գործընթացին:

Այնուամենայնիվ, չսպասելով լիբանանյան հակամարտությունների ավարտին, Երվանդը 1985-ին տեղափոխվեց Բոստոնի շրջան և կնոջ՝ Փարիզից եկած ֆրանսիացի ինտերիեր-ճարտարապետի հետ հիմնեց իր երկրորդ ճարտարապետական ընկերությունը: Նրանք միասին մշակեցին բնակելի և կոմերցիոն տարբեր նախագծեր՝ միաժամանակ մասնագիտանալով Նոր Անգլիայի մուլտիպլեքս կինոթատրոններում, ինչպես նաև կրոնական կառույցներում՝ ներառյալ մի քանի հունական ուղղափառ և հայկական եկեղեցիներ: Նա մասնակցել է նաև Բոստոնում Հայոց ցեղասպանության ոգեկոչման նախագծին:

Նրանք՝ Երվանդն ու իր կինը, ունեն երկու երեխա: Նրանց դուստրը միջազգային մարդասիրական և զարգացման հարցերով զբաղվող կազմակերպությունների խորհրդատու է, ներկայումս պաշտպանում է իր թեկնածուականը սոցիոլոգիայի գծով: Նրանց որդին վիրաբույժ է՝ մասնագիտացած ձեռքի վիրաբուժության մեջ:

Իր զարմիկ Վահե Ֆաթալի՝ անվանի գրաֆիկ դիզայներ, նկարիչ, արվեստի կոլեկցիոներ և բարերար, մահից հետո Երվանդ Նահիկյանը հիմնադրեց «Վահե Ֆաթալ» հիմնադրամը, որը շահույթ չհետապնդող հաստատություն էր Միացյալ Նահանգներում և նվիրված էր արվեստին ու մշակութային նախաձեռնություններին: Վահե Ֆաթալը նաև եղել է «Ղարաբաղի բարձրագույն բռնցք» պատանուի ձևավորողն ու Արցախի Հանրապետության դրոշի հեղինակը: 2021 թվականին Վահե Ֆաթալը հետմահու արժանացել է Արցախի Հանրապետության նախագահի «Մեսրոպ Մաշտոց» շքանշանին:

Երվանդ Նահիկյանը և խորհրդի անդամները հիմնադրամի բարեգործական ջանքերն ուղղում են ազգային մշակութային կարևորագույն խնդիրների լուծմանը: Հիմնադրամն աջակցել է Ստեփանակերտում Ֆրանկոֆոնիայի կենտրոնի, ՏՏ դպրոցի ստեղծմանը և ֆինանսավորմանը, Արցախի ջազ նվագախմբին, Հայաստանում սովորող ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցմանը:

Միացյալ Նահանգներում «Վահե Ֆաթալ» հիմնադրամը միջազգային մրցանակակիր հայ կինոռեժիսորի հետ ֆինանսավորում է գեղարվեստական և վավերագրական ֆիլմարտադրությունը: Վերջին ֆիլմը, որի ֆինանսավորումը իրականացվում է հիմնադրամի կողմից, արցախյան ճգնաժամի մասին է: Հիմնադրամն աջակցում է Հայաստանի գյուղական շրջաններում իրականացվող այնպիսի խոշոր ծրագրերի, ինչպիսիք են «COAF»-ը և «TUMO»-ն:

Երվանդը և ժերար Գերգերյանը, որը միջազգային իրավաբան է և նույնպես Արցախին աջակից, Փարիզում վերջերս բացեցին «Centre Vahe Fattal» («Վահե Ֆաթալ կենտրոն») հայկական ոչ առևտրային միությունը, որն առաջարկում է ուսուցում և վերապատրաստում կիրառական արվեստի մասնագիտությունների համար:

Երվանդ Նահիկյանը արժանացել է Հայ Կաթողիկե Պատրիարքարանի «Սուրբ Վարդան» և «Մխիթար վանահայր» շքանշանների: Նա արժանացել է Արցախի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Լույսի առաքյալ» գերատեսչական մեդալին:

«Vahe Fattal» («Վահե Ֆաթալ») հիմնադրամն ուրախ է իր ֆինանսական աջակցությունը բերելու «Լուսարար» կրթամշակութային կազմակերպության կողմից վերահրատարակվող «Լուսարար» թերթի վերածնունդը, որը մշակութային փարոս է Հայաստանում ասպատակած բազմաազգար արցախցիների համար:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՆԱ ԱՌԱՋԱՊԱՆ ԶԻՆՎՈՐ ԷՐ ՀԱՅԻ ԻՆԵՆՈՒԹՅԱՆ ՊԱՆՊԱՆՄԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ



2017թ. ամռանն էր: «Կարին» ավանդական երգի-պարի համույթի հիմնադիր և ղեկավար Գագիկ Գինոսյանին հանդիպեցինք Արցախի Հանրապետության ԿԳՄՍ նախարար Սլավա Ասրյանի աշխատասենյակում: Նրանք քննարկում էին «Ազգային երգ-պար» առարկան Արցախի դպրոցներում ներդրելու ծրագիրը: Առաջին խնդիրը առարկայի մասնագետներ պատրաստելն էր, որը պետք է իրականացվեր վերապատրաստման դասընթացների միջոցով: Առաջին վերապատրաստվողների արդյունքներից Գինոսյանը գոհ էր: «Լուսարար»-ի հետ ունեցած ճեպագրույցում նա իր տպավորությունը հայտնեց. «Ծրագրի մեջ ընդգրկված դպրոցների առաջին խմբում փայլուն ուսուցիչներ կան, որոնք և՛ երգի, և՛ պարի, և՛ մարդկային, և՛ մանկավարժական տեսանկյունից լավագույնս պատրաստված են, և վստահ եմ, որ այդտեղից դուրս եկած երիտասարդները, իրոք, մեր երկրի լիարժեք քաղաքացիներ կդառնան»: Առարկայի նպատակի մասին ասաց. «Մենք չենք փորձում երեխաներին ուղղակի երգել-պարել սովորեցնել: Դա ընդամենը միջոց է, որ ինքնություն, ազգային մշակույթի հարազատություն փոխանցենք երեխաներին, Հայաստանի, Արցախի, հայ ժողովրդի արժանավոր քաղաքացի դաստիարակելու առաքելություն է: Այսինքն՝ մշակութային գանձերը փոխանցելով, մշակույթը ճիշտ ձևով ներկայացնելով, երեխաների մեջ դեպի ազգային մշակույթ սեր ներշնչելով՝ նաև սեր ներարկել դեպի հայրենիքը»:

Կարճ ժամանակում Արցախի բոլոր դպրոցներում ներդրվեց «Ազգային-երգ» պարը: Եվ բոլոր ուսուցիչների հետ իր աշակերտներով ամձամբ պարապեց Գինոսյանը: Եվ այդպես ազգային պարը դպրոցների միջոցով վերադարձվեց ժողովրդին, ինչպես ինքն էր երազում՝ բեմից իջավ հրապարակ, դարձավ ժողովրդի կենցաղի մաս:

Ինքնության պահպանման նրա պայքարը սկսվեց ռազմադաշտից, շարունակվեց մշակութային դաշտում, քանզի համոզված էր. «Երբ հայը կկորցնե իր հպարտությունը, ապա հայ լինելը կդառնա անտանելի»: Եվ գուցե թե ամեն տեղ խիզախած մարտիկի սիրտը չդիմացավ հայի՝ հպարտության բարձունքից գահավիժելու իրողությանը:

Մեծ հայրենասերին դեպի հավերժություն ճանապարհելիս երիտասարդները մարտական երգեր կատարեցին և ռազմապար պարեցին: Ասել է թե՛ մեր պայքարը շարունակվում է...

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՑԱՆՅԱՆ ԳՈՂԳՈՒԹԱ

ԿՅԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐԶԸ ԴԺՈՒՍԱՅԻՆ ԳՈՒՅՆԵՐՈՎ

Երբեք չեն հրապարակվել դեպքերն ու իրադարձությունները անմիջական տպավորության տակ արձանագրելով: Դրանք նախ պիտի կարողանային մարտել, այնուհետև թղթին համծնել: Մտքերս փոթորկված ծովում հայտնված նավի բեկորների պես այս ու այն կողմ են թռչում, ու հավաքել չի լինում: Փոթորկված հոգիս էլ պատեպատ է տալիս իրեն ու խաղաղ անկյուն չգտնելով՝ չի հանգրվանում ոչ մի տեղ: Մեկ ծառս է լինում աշխարհի ամարգալայինների դեմ, մեկ ընկղմվում հատակն անդունդի, մեկ անհանգիստ թափառում աշխարհաշխարհի լույսի փնտրտուքով համակված ու երբեք չի խաղաղվում: Այսքան փոթորիկների միջով անցած հոգին ինչպե՞ս կարող է խաղաղվել, երբ խաղաղության մշույլ իսկ չկա, երբ մի արհաւիրքը հաջորդում է մյուսին, երբ խաղաղ արշալույսներ երագող Արցախիս ժողովուրդը անընդհատ բռնությունների է ենթարկվում ու իր խաղաղարար, ստեղծագործ կյանքը չի կարողանում վայելել սեփական հողում:

պնդում էին մեզ: Ցերեկները գործերով զբաղված էինք, գիշերները չէին լուսանում. խավարն իր հետ ոտիսի շունչն էր բերում-մոտեցնում մեր հարազատ օջախներին:

Այնուհանդերձ հայրենի տանն էինք, փառաբանում էինք մեր հերոս տղաներին, վառ պա-



հում նրանց անմար հիշատակը: Նրանց հոգիներն էլ մեզ պայքարի ուժ էին տալիս: Ամենակարևորը՝ մենք մեր սեփական տանն էինք ու ոչ ոքից ոչինչ չէինք մտրում...

Ծակատագրի խաղերն էլ անկանխատեսելի են, չգուշակվող...

Բլուկադայի օրերին որոշ մարդիկ խիղճները գրպանները դրած՝ ծախեցին իրենց հոգիները, երախները լայն բացած՝ ժողովրդի հաշվին հագուրդ տալով հարստամալու իրենց ծարավին:

Ֆեյսբուքյան էջերը ողողվեցին առուծախի կեղեքիչ տեսարաններով: Տիեզերական գներով սկսեցին վաճառվել բուսական յուղը, շաքարավազը, փտած ու կարկտահար խնձոր կոշիկը, վառուցը, կարտոֆիլը, վազգի փոշին, օձառը... (հավանաբար այս ապրանքներն էլ էին ցնծում այն փաստից, որ կարող էին նման «պատվի» արժանանալ):

Ամեն ինչ առուծախի առարկա դարձավ, մույնիսկ՝ խիղճը:

Ժողովրդական իմաստությունը ճիշտ ու զո-

րեղ է ամեն ինչից. մարդուն կարելի է ճանաչել նեղության ժամանակ: Ու ճանաչվեցին ժողովրդի կեղեքիչները ճակատագրական այդ ծանր պահերին: Նրանց թալանը չափ ու սահման չէր ճանաչում: Նրանց թիվը շատ չէր խեղճ ժողովրդի մեջ, բայց թալանի առումով գերակշիռ դերակատար էր...

Սակայն այս իրավիճակում անգամ մեր ժողովուրդը չկորցրեց իր մարդկային կերպարը: Նա ուժեղ էր, արի, քանզի իր հողի վրա էր: Հող, որ ուժ ու կրող էր պարզապես նրան, և նա ամենայն լուծությամբ տանում էր բոլոր գրկանքները:

Իսկ կյանքի ճանապարհը շարունակում էր փակ մնալ՝ մատնելով մեր ժողովրդին տառապանքների ու անմարդկային պայմանների: Հարուստները շարունակում էին իրենց ճոխ ու հանդիսավոր ծնունդներն ու խրախմանքները, իսկ աղքատները համեստ, առանց ավելորդ ճոխությունների էին կազմակերպում իրենց երեխաների ծննդյան օրերը. մշույլ էին ավելի համեստ՝ կիսած ծննդի կամ սեփական մոմեր տեղադրելով ու առանց քաղցրավենիքի, որը մեր երեխաների համար ամհասանելի մի երագանք էր դարձել: Այնուամենայնիվ, չէինք կորցնում մեր կենսասիրությունն անգամ այս պայմաններում: Հպարտ ու համառորեն ապրում էինք մինչև 2023թ. սեպտեմբերի 19-ը:

Այդ օրը սովորականի պես առօրյա գործերով էինք զբաղված: Ի՞նչ իմանայինք, թե ինչ էր բերելու սեպտեմբերի 19-ը մեր գլխին:

Կեսօրին լսվեցին թնդանոթների ու արկերի հռնդյունները (մեզ շատ ծանոթ ձայներ էին): Ոտխը կրկին լայն երախը բացել ու ահաբեկում էր բնիկ ժողովրդին՝ արցախցիներին: Գյուղի չորս կողմից դղրդյուններ էին լսվում, արկերի տեղադրարժի մեր մեր անտառների, սարերի, դաշտերի ու ձորերի վրա: Կրակ էր թափվում մեր դիրքերի վրա, իսկ Արցախի զինվորը համառորեն դիմադրում ու համարժեք պատասխան էր տալիս: Բայց նա մե՞նակ էր թվով ու ռազմամթերքով իրեն հազար անգամ գերազանցող թշնամու դեմ: Կյանքի ճանապարհը փակ էր, ազգադավ ղեկավարությունն էլ՝ ուրացած հայրենին: Արցախցի զինվորը մե՞նակ էր կյանքի ու մահվան կռիվ տալիս:

Նորից պատերազմ էր... Վախից սակվել ու կուչ էինք եկել պատերի տակ՝ ամեն անգամ փորձելով պարզել, թե արկը հիմա էլ որտեղ

պայթեց: Չէին դադարում խլացնող դղրդյունները: Սպասում էինք՝ չի՞մանալով, թե ինչի...

Իսկ ու՞ր էին խաղաղապահները, ինչո՞ւ ոչինչ չէին ձեռնարկում:

Չետագայում պարզվեց, որ նրանք լավ էլ տեղյակ էին թշնամու ձեռնարկած քայլերից (Արցախում իբր հակահարձակական օպերացիա էր իրականացվում, ահաբեկիչներն էլ իբր հայրենապաշտպան զինվորներն էին, որ դիրքերում մեր անդրորն էին ապահովում):

Ամեն վայրկյան սպասում էինք, որ թշնամին ուր որ է գյուղ կմտնի: Ոչինչ հնարավոր չէր իմանալ, ոչ մի տեղ զանգել չէր լինում. կապ չկար: Փոքրիկ Արցախս մեկուսացած էր խուլ ու բութ աշխարհից, ոչ ոքի չէր հետաքրքրում աշխարհին հայտնի հսկաներ նվիրած այս գողտրիկ անկյունը (նավթի ու գազի պաշարներով արբած Եվրոպան կուրացել էր, շահը գերակա արժեք էր համար Եվրոպայի համար, ինչպես բոլոր դարերում է եղել... Պատմությունը շատ հարուստ է նման փաստերով):

Իսկ կյանքի ճանապարհը, որ բլուկադայի ամիսների ընթացքում դարձել էր հայերի առևանգումների ու ստորագումների միջոց, շարունակում էր փակ մնալ՝ գրկելով բոլորիս մարդասիրական որևէ օգնությունից:

Այս ամենը, սակայն, ոչինչ էր՝ համեմատած այն արյունների հետ, որ ունեցանք սեպտեմբերի 19-ին և դրան հաջորդած օրերին:

Գյուղից շարժ էր նկատվում. մեքենաներ էին դուրս գալիս. նրանք էին, ովքեր վառելիք ունեին: Երեկոյան դե՛մ ավտոբուսներ երևացին գյուղում. էլի անտեղյակ էինք կատարվող դեպքերից:

Մուրջ վրա հասավ, դղրդյունները շարունակվում էին: Ծանոթներիցս մեկը զանգեց, թե խաղաղապահները ավտոբուսներ են ուղարկել՝ մարդկանց տարահանելու օդանավակայանի տարածք: Անտեղյակ սպասվելիք իրողությունից՝ առանց հագուստի ու փաստաթղթերի, տնային հագուստով դուրս եկանք տնից՝ երբեք չնտածելով, որ այլևս բախտ չի փնձակվելու վերադառնալ հարազատ օջախներ...

(շարունակելի)

Սուրյայա ՂԱԶԱՐՅԱՆ
Մանկավարժ, Ասկերանի շրջան, գ. Խնապար

ՆՊԱՏԱԿԸ ԱՐՑԱՆԻ ԿՐԹԱՄՆԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է

1 - Թերթն, անշուշտ, համախմբելու կարողություն ունի: «Լուսարար»-ի պարագայում մենք դա տեսել ենք Արցախում, երբ այն ուներ ավելի քան 3000 բաժանորդ: Խոստովանեմք, դա լավ ցուցիչ էր պարբերականի հանրաճանաչությունը հավաստելու համար: Բայց այսօր, երբ արցախցի ուսուցիչները, մտավորականներն առհասարակ, ցրված են Հայաստանով մեկ, իսկ մի մասն էլ, ցավոք, ԳԳ-ից դուրս է գտնվում, ի՞նչ արդյունավետ գործիքներ եք տեսնում համախմբման, համագործակցության համար: Դժվարություններն անզեն աչքով էլ տեսանելի են:

- Այո, ցավալի է, բայց նաև հեռանում են հուսալքված և ընկճված, ահաբեկված, հայրենագուրկ: Եվ առաջին խնդիրը, որ պետք է ձևակերպվել, Արցախը Հայաստանում պահելն էր: Երբեմն ինձ գրում են Ռուսաստան մեկնած լավագույն աշակերտներ կամ ուսուցիչներ և դժգոհում կրթության որակից ու էլի շատ բաներից: Իմ խորին հանդգնմամբ ամեն կերպ պետք էր հաղթահարել առկա դժվարությունները և մնալ Հայաստանում: Արցախահայ հավաքականությամբ է, որ հետդարձի տեսլականը դառնալու է շոշափելի: Համագործակցության ինչ կապեր էլ ստեղծվեն, թերևս այս պահին իրավիճակային լուծումների էֆեկտ են ապահովելու: Այնուհանդերձ, կարելի է և պետք է Արցախի ուսուցիչները իրար տեղ իմանան, շփվեն և համագործակցեն, համատեղ ծրագրեր իրականացնեն՝ առանցքում պահելով Արցախը բնիկ տեղերով շենացնելու գաղափարը: Ի վերջո, մերն է Արցախում ապրելու, Արցախը հայկական պահելու մշակութային տիրապետման առաջնային իրավունքը:

- Ի՞նչ եք կարծում, կոմպակտ բնակվելու պարագայում հնարավոր է առանձին հանրակրթարաններ բացել արցախցի դպրոցականների համար, որտեղ հիմնականում կրա-

սավանդեն արցախցի ուսուցիչները: Դա հնարավոր էր համարում տեխնիկական ու ֆինանսական: Թվում է՝ արցախցի դպրոցականներն իրար հետ սովորելիս հոգեբանորեն ավելի դիմացկուն կլինեն: Նման գաղափարն հանրայնացնելն արդյունք կտա՞:

- Բարբառը, ոչ նյութական մշակութային ժառանգությունը հնարավոր էր պահել և փոխանցել սոսկ առանձին բնակավայրերում արցախցիների բնակեցմամբ կամ կրթական հաստատություններ պահելով՝ լինի դա մանկապարտեզի, դպրոցի կամ բուհի տեսքով: Դա կապված է մեծ ծախսերի հետ: Գաղափարը կարելի է իրականացնել գաղափարական ճիշտ առաջնորդումներով ու ձևակերպումներով: Արցախի բարբառն արդեն վտանգված է: Վտանգի տակ է ոչ միայն նյութական, այլև ոչ նյութական մշակութային հզոր ժառանգություն, որը մնաց շան բերանում, օրեցօր խորացող ամայության ու անորոշության մեջ:

- Դուք հիմա Հովհաննես Թումանյանի թանգարանի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարն եք: Արցախի կրթամշակութային բնագավառի խնդիրների լուծմամբ զբաղվելու դա չի՞ խանգարում: Գիտե՞ք, որ շատ ծրագրեր ունեք, ընթացիկ ու մեկնարկող ձեռնարկումներ, պլաններ: Նաև այս մասին մամրամասնե՞ք:

- Արցախի ժամանակավոր կրթստի ողբերգությունը շատ ծանր է անդրադարձել նաև ինձ վրա, բայց Հովհաննես Թումանյանի թանգարանը դարձավ հոգևոր ապաստարան, Թումանյանին ինձ միխթարեց և սփոփեց, ոգևորեց և շարունակելու ուժ տվեց: Անտարակույս, ես օգտագործել ու շարունակելու եմ օգտագործել իմ կապերը՝ ծառայեցնելով այն Հայաստանում Արցախը պահելու և, առհասարակ, Արցախի կրթամշակութային խրամատի ամրապնդմանը: Կան ծրագրեր, որոնց մեկնարկը տրված է, բայց

կցանկանալի «Լուսարար»-ի հետ կիսվել որոշակի ճանապարհ անցնելուց հետո: Միայն նշեն, որ այդ ծրագրերն ուղղված են Արցախի ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանմանն ու հանրահռչակմանը, արցախցի երեխաների հոգեբանական վերականգնմանն ու կրթությանը Թումանյանի հեքիաթների և հեքիաթաբերապիայի միջոցով, կրթական, հոգևոր և մշակութային արժեքների ամրապնդմանն ու փոխանցմանը:

- Դուք ժամանակին եղել եք Արցախի Հանրապետության ԿԳՄՍ նախարարը և լավ ծանոթ եք այդ ոլորտների խնդիրներին: Ի՞նչ եք կարծում, հայաստանյան իրականությանն ինտեգրումը ներկա պահին նորմալ է ընթանում. նկատի ունե՞ն հատկապես մշակութային ու մարզական ոլորտները: Ի՞նչ օրյակտիվ կամ սուբյեկտիվ հանգամանքներ եք տեսնում, որոնք կարող են խոչընդոտել լիարժեք ինտեգրման գործընթացին:

Պետք է ստել, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը մեծ և զննահատելի աշխատանք է կատարել աշակերտների, ուսուցիչների և ուսանողների կրթական կարիքների և խնդիրների լուծման ուղղությամբ: Օրերս ՀՀ ԿԳՄՍ-ն հայտարարել է մի շարք դրամաշնորհային ծրագրերի մասին, որոնք նպատակաուղղված են Արցախի պատմամշակութային ժառանգության պահպանմանը: Օրինակ, «Հայ մշակույթը հանրահռչակող օտարալեզու գրականություն» 2024թ. ծրագրի իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհի հատկացման մրցույթի պայմաններից մեկը վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտու պատմամշակութային ժառանգությանը: Մայրենի վեճի միջազգային օրվան ընդառաջ Արցախի դպրոցականների ինտեգրմանն ուղղված մրցույթ է հայտարարվել «ՅԷԿ նախշուն գիրքից անհրաժեշտ» տեսանյութերի պատրաստման տեսքով: Ոչ նյու-

թական մշակութային ժառանգության պահպանման ուղղված մրցույթ է հայտարարել նաև ՅՈՒՆԵՍԿՕՆ՝ 2024-2025թթ. Մասնակցային ծրագրի շրջանակներում, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև Հ. Թումանյանի թանգարանը: Մեր ներկայացրած ծրագիրն ուղղված է Արցախի ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանմանն ու փոխանցմանը, շարունակականության զգացման ապահովմանը: Ծրագրում ներկայացված են Արցախի կին հեքիաթասացներին նվիրված սեմինարներ, բարբառային հեքիաթասացությանը կանոնադրված Հ. Թումանյանի մի քանի հեքիաթներ, Արցախի բարբառով կտպագրված Հովհաննես Թումանյանի տասը հեքիաթներ և այլն: Արցախյան հեքիաթանյութի ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել արցախցի կին ասացողին, որի մասին մենք անդրադարձ կանենք: Միայն նշենք, որ Արցախի կին հեքիաթասացների վերաբերյալ տվյալների ուսումնասիրությունն ու համակարգումը, անտարակույս, նպաստելու է հայկական հեքիաթի առավել խորքային ընկալմանն ու մեկնությանը՝ որպես հաճախ հեքիաթի հերոսին ապրումակցող, առանձին դեպքերում անգամ «միջամտող», հեքիաթասաց: Նշեն նաև, որ Հ. Թումանյանի թանգարանն ընդգրկված է Եվրոպական հեքիաթի ուղու հանձնաժողովում և այս տարի Հեքիաթագիտության օրվան ընդառաջ Եվրոպական հեքիաթի ուղու յուրօրյան ալիքի համար կներկայացվեն արցախյան հեքիաթ Արցախի բարբառով: Ինչպես տեսնում եք, Հովհաննես Թումանյանն էլ է մեզ օգնում արցախահայության հավաքականության պահպանման հարցում և իր հարկի տակ է ամենելու շատ ու շատ արցախցի երեխաների՝ նպաստելով սոցիալական միասնության և շարունակականության զգացմանը:

Հարցազրույցը՝ Սվեդլանա ԽԱԶԱՐՅԱՆԻ

ՄԵՆՔ ԿԱՆՔ

«ԱՐՑԱԽՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՆՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»-Ն ՍԿՍԵԼ Է ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2023 թվականի սեպտեմբերի 19-ին հակահաբեկչական գործողությունների անվան տակ Արցախում լայնամասշտաբ ռազմական գործողություններ սկսեց Արցախի Հանրապետության դեմ, որը աղետալի հետևանքներ թողեց հայ ժողովրդի պատմության մեջ:

Թշնամու վերահսկողության տակ անցած տարածքներում հայկական մշակութային ժառանգությունն ամեն օր թիրախավորված ոչնչացվում է: Քանդվում և ավերվում են վանքերն ու եկեղեցիները, ջնջվում են հայկական բոլոր հետքերը, որը կանխարգելելու որևէ մեխանիզմ, բացի վանդալիզմի դեպքերը արձանագրելուց, չկա: Ինչ վերաբերում է Արցախում ստեղծված և մինչ պատերազմը գործող մշակութային կազմակերպություններին, ապա նշենք, որ դրանց կազմալուծման գործընթացի մեկնարկը արդեն իսկ տրված էր:

Թեև Արցախի նյութական մշակութային ժառանգությունը (եկեղեցիներ, հուշարձաններ) փրկելու շատ լծակներ չունենք, քանի որ այն գտնվում է թշնամու վերահսկողության տակ, հնարավոր է կազմակերպել ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությունը: Դա կարելի է իրականացնել առա-

ջին հերթին պահպանելով Արցախի մշակութային խմբերը, որոնք իրականում ժառանգության կրողներն ու հանրահռչակողներն են:

2023թ. նոյեմբերի 15-ին հիմնադրվել է «Արցախյան մշակույթի պահպանման կենտրոն» հասարակական կազմակերպությունը, որի հիմնական նպատակն է՝ պատմական բարդ ու դժվար ժամանակներում ստեղծված և տասնամյակների պատմություն ունեցող Արցախի պետական մշակութային կազմակերպությունների պահպանման համար հարթակ ստեղծելը, Արցախից տեղահանված բնակչությանը կենտրոնացված կարգով մշակութային միջոցառումների, նախաձեռնությունների շուրջ համախմբելը, օկուպացված շրջանների բնակչության միջև ներհամայնքային կապերի, ներմշակութային հաղորդակցության, ինչպես նաև տարիների ընթացքում ստեղծված մշակութային արտադրանքի պահպանումը, տեղական մշակույթի տարածումն ու տեղական նախաձեռնությունների խթանումը՝ վերոհիշյալ գործընթացներում համապատասխան ներմշակութային հաղորդակցությունը հեշտացնելու նպատակով, արցախյան մշակույթի (հուշարձանների, սովորույթների ու ավանդույթ-

ների, բանահյուսության, բարոյագիտական և գեղագիտական գաղափարախոսության, բարբառի և խոսվածքների) պահպանությանն ու հանրահռչակմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը և արտաքին մշակութային քաղաքականության մեջ արցախյան մշակույթի նպատակաուղղված ներկայացումը: Հասարակական կազմակերպության մեջ միավորվել են գրեթե բոլոր պետական համայնքները, ինքնագործ խմբերը, մշակույթի ոլորտի շուրջ 500 ներկայացուցիչներ:

Նախանշված նպատակների իրականացումը կնպաստի Արցախի մշակութային կյանքը երկրի սահմաններից դուրս հանրահռչակելու առաքելությանը, Արցախի համերգային կազմակերպությունների գործունեության և «Արցախ» անվան պահպանությանը, որը բարոյահոգեբանական առումով խիստ անհրաժեշտ է ժողովրդի վերակազմակերպման ու հետագա պայքարի համար:

«Արցախյան մշակույթի պահպանման կենտրոն» հասարակական կազմակերպության առաջին նախաձեռնությունը Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի

ազգային ակադեմիական թատրոնի դահլիճում 2023թ. դեկտեմբերի 10-ին կայացած Արցախի երաժշտարվեստի և պարարվեստի խմբերի ու համայնքների համատեղ համերգն էր: Այն ավելի շատ ճանաչողական բնույթ ուներ հայաստանյան լսարանի համար, որի գլխավոր նպատակն էր իրատեսական քայլեր ձեռնարկել Արցախի երաժշտարվեստի և պարարվեստի խմբերի ու համայնքների պահպանման ու շարունակական գործունեության համար: Պատահական չէր ընտրվել նաև համերգի կազմակերպման օրը. 1991թ. դեկտեմբերի 10-ին Արցախն անցկացրեց իր Անկախության համապետական հանրաքվեն: Նույն օրը նաև Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրն է:

Բարեգործական համերգին ելույթ են ունեցել Արցախի ազգային նվագարանների պետական նվագախումբը, Արցախի պետական երգչախումբը, «Մռակած» կամերային երգչախումբը, Արցախի ջազ-նվագախումբը, «Դարաբաղ» էստրադային համույթը, «Արցախի ծայրեր» նախագիծը, Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնը, Արցա-


խի պարի պետական համույթը, Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի սաները, «Վելլանս» վոկալ խումբը, Նովա բենդը, Երգիչներ Վարդան Բադալյանը և Արտեմ Վալտերը:

Կազմակերպության կողմից առաջիկայում նախատեսվում են մի շարք ծրագրեր՝ ուղղված արցախահայության մշակութային իրավունքների իրացմանը, թշնամու վերահսկողության տակ անցած շրջանների մշակութային հուշարձանների վերաբերյալ ցուցահանդեսների կազմակերպմանը, գեկույցների պատրաստմանը, արցախյան բարբառով հեքիաթների մշակմանը, բեմադրմանը, թվայնացմանն ու հեռարձակմանը, սահմաններձ շրջաններում կրթամշակութային միջոցառումների իրականացմանը, արցախյան ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությանն ու հանրահռչակմանը:

«Արցախյան մշակույթի պահպանման կենտրոն»-ի նախաձեռնությունները պարբերաբար տեղ կգտնեն «Լուսարար»-ի տպագիր էջերում ու էլեկտրոնային հարթակներում:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Լուսանկարչական ակնթարթներ՝ «Մենք կանք» խորագրով համերգից



ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Լեռնիկ ՀԱԿՈՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԱՐՑԱԽԸ ԱՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ «ԱՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԵՋ

Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» պատմագիրքը հայ մատենագրության ինքնատիպ գործերից է՝ ընդգծված գաղափարական շերտերով ու ոճապատումային առանձնահատկություններով, տոհմագրության (ճյուղագրության) ժանրատեսակով:

Քաջ գիտակցելով իր գործի էությունը՝ պատմիչը ձգտել է գրել Սյունիքի պատմությունը, որը մինչ այդ ոչ մեկի կողմից չէր շարադրված, կամ եթե անգամ եղել է նման գործ, չի պահպանվել:

Ենթադրելի է, որ մատենագրության մեջ Մեծ Հայքի այս մեծ, հզոր նահանգի մասին որոշ տեղեկություններ արձանագրվել են, սակայն դրանք կրում են կցկտուր բնույթ և ամբողջական պատկեր չեն ներկայացնում:

Պատմության առաջին գլխում Օրբելյանը շարադրում է այն երկու գլխավոր դրոշմապատճառները, որոնք նրան մղեցին երկի ստեղծմանը:

Առաջինն այն է, որ Սյունյաց երկիրը հայոց պատմության մեջ թե՛ ռազմաքաղաքական, թե՛ տնտեսական, թե՛ մշակութային առումով միշտ էլ ունեցել է կարևոր դերակատարում: Այնտեղ վաղնջական ժամանակներից գոյություն են ունեցել աշխարհիկ և հոգևոր իշխանություններ, կատարվել են վկայության արժանի բազմաթիվ գործեր, և դրանք պետք է գրի առնվեն՝ հանուն գալիք սերունդների:

Երկրորդ պատճառը. վեճեր էին առաջանում աշխարհիկ և եկեղեցական տիրույթների, անշարժ գույքի վերաբերյալ, տեղի էին ունենում սահմանների խախտում և ունեցվածքի հափշտակում, ուստի այս բոլորը պետք էր հաստատապես արձանագրել ըստ պատկանելության, հիմնավորել ու նշել ճիշտ սահմանները, «որպեսզի ճանաչեն Սյունյաց իշխանների և հայրապետների աստիճանն ու դիրքը և նրանց ամբողջ կարգ ու կանոնը, սովորությունները, որ (երկիրը) չտանհարվի ու կողոպտվի հափշտակիչներից և դիվախաբ մարդկանցից»:

Թեև պատմության առաջնը Սյունիքի պատմությունն է, սակայն այն շատ նուրբ ու վարպետորեն միահյուսված է Հայաստանի և հայ ժողովրդի պատմությանը՝ ավելի ամբողջականացնելով ու գաղափարականացնելով նյութը: Երկուսն էլ մասնավորապես տեղ է հատկացված հարևան երկրներին՝ Աղվանքին ու Վիրքին, հիշատակվում են պարսիկները, հույները և այլ ժողովուրդներ:

Պատմության մեջ նաև հիշատակվում է Մեծ Հայքի Արցախ նահանգը՝ իր բնակավայրերով, աշխարհագրական անվանումներով, և սա բնական է, քանի որ նահանգներն իրար սահմանակից են և սերտորեն հարաբերակցված են պատմությամբ, կենցաղով ու մշակույթով:

Նաև չպետք է անտեսել այն իրողությունը, որ ազգային պատմության մեջ Արցախ աշխարհը հաճախ անվանվում էր Փոքր Սյունիք և ըստ պատմագրության, Արցախի նախարարական տունը սերվում էր Սիսակից. «Իսկ սրանց սերունդից ընտրելով մի շատ քաջ, գեղեցիկ ու բարոյաբարո մարդու՝ Եռան (Առան) անունով, նահապետ է կարգում Առան մեծ դաշտի վրա, Երասխից մինչև Հունաբերտ: Եվ քաղցր բարքի պատճառով նրան Աղու էին կանչում, որտեղից էլ աշխարհը նրա անունով Աղվանք կոչվեց»:

Արցախ անվան առաջին հիշատակումը կապված է Վարդանանց պատերազմից հետո պարսկական զորքերի կողմից իրականացվող հետապնդումներից խուսափող փախստականների հետ, որոնք «ուզում էին անցնել Արցախի ամուր աշխարհը» փրկվելու նպատակով:

Հաջորդ հիշատակումը կապված է արաբ Յուսուֆի կողմից հետապնդվող հայ իշխանների հետ, որոնք քաջությամբ ու անկրկն կամք ցուցաբերելով՝ նահանջում են Գարդմանք ու Արցախ. «Ապա իշխանները, տեսնելով եկած-հասած հրոսակներին, ետ դարձան,

հույժ քաջությամբ շատերին կոտորեցին, իսկ իրենք անցան-գնացին Գարդմանի և Արցախի ամուր աշխարհ և մնացին այնտեղ...»:

Չետաքրքիր ու ուշագրավ է այն, որ Արցախ աշխարհը միշտ հիշվում է որպես անմատչելի, ամուր, անառիկ մի վայր, որտեղ միշտ էլ վառ է պայքարի, ընդվզման ոգին:

Մնացյալ երկու հիշատակումներն առնչվում են եկեղեցական կյանքի անցուդարձին՝ կապված հրաշագործ խաչի հետ. «Դարձյալ՝ նախքան այս, Արցախ գավառից բերել էին աստվածոճկակ խաչի հրաշագործ նշանը, որի մեծամեծ հրաշքների ու զարմանալի սքանչելագործությունների համբավը տարածված էր ամբողջ աշխարհում»:

Պատմության մեջ երկու անգամ շեշտվում է Ամարաս անունը, որտեղ Գրիգոր Լուսավորչի կողմից հիմնվել է եկեղեցի՝ հետագայում վերածվելով քրիստոնեական գլխավոր տաճարի. «Գնալով Վիրք, այնտեղից՝ Աղվանք, մինչև Մասբուլք ու Հոնաց պահակը և բոլորին հաստատելով քրիստոնեական հավատքի մեջ, գալիս է Փոքր Սյունիք, մտնելով Ամարաս՝ եկեղեցի է շինում ու այնտեղ թողնում կրոնավորներ»:

Ամարաս անունը նաև շեշտվում է՝ կապված Գրիգորիսի գավազանի հետ. «Բայտուն... Տարսայիճի որդի Ջալալին մի քանի մոնղոլ մարդկանցով նա ուղարկեց Ամարաս, որը իրն ժամանակներից Աղվանքի կաթողիկոսական մեծ աթոռն է եղել, և իր մոտ բերել տվեց սուրբ Գրիգոր Լուսավորչի որդի Վարդանի որդու՝ սուրբ Գրիգորիսի գավազանը»:

Մեծ սիրով ու ոգեշնչմամբ է պատմիչը խոսում Դիզակապատի մասին, երբ նկարագրում է Տաթևի եպիսկոպոսարանի աշխարհագրական դիրքը, վանքի շինարարությունը և հոգևորականներին այնտեղ ժողովելը. «Գտնելով այս տեղը խիստ համապատասխան ու հարմար՝ գրեթե վերին թելադրանքով եկան, հաստատվեցին այստեղ՝ այս գեղատեսիլ վայրում, որը բարձր դիտանոցի նման նայում է դեպի արևելք շատ գավառների, Դիզակապատի կենտրոնի դիմաց, որտեղ թաղված են բազմաթիվ սուրբ նահատակներ»:

Ստ. Օրբելյանը հիշատակում է նաև Գանձասարն ու Դադեի վանքը՝ որպես հոգևոր կենտրոններ, որտեղ տեղի են ունեցել կարևոր իրադարձություններ՝ կապված եկեղեցական կյանքի հետ. «Ապա երկնային տնօրինության մեջ Գանձասարի եկեղեցական գիշերային արարողության ժամանակ դնում է մի գիրք՝ իբր թե Հովհան Ոսկեբերանինը, և կաթողիկոսին մեծարանքով հրավիրում են կարգալու...»:

Իսկ Սիսական տան վանքերի ցանկում հիշատակվում են Դադեի վանքն ու Ծիծեռնո վանքը. «... Ապա Լեռվանքը, Քրոնից վանքը, Դադեի վանքը, Կուռվածորի վանքը, Ծիծեռնո վանքը, Խաչատրո վանքը, Չյունասարի վանքը»:

Պատմության մեջ շատ է հիշվում Մուղանի կամ Դառն դաշտը, որը առանցքային դեր է ունեցել պատմական իրադարձությունների զարգացման գործում: Մուղանի դաշտը դարձել էր յուրօրինակ հեմակետ, որտեղից նվաճողներն անընդհատ արշավանքներ էին կազմակերպում Հայաստանի դեմ. «Իսկ մինչ այս արքունի ցեղից Ալյան անունով մի մարդ գլուխ բարձրացրեց, իր կողմը գրավեց բազմաթիվ գործերի ու գորագլուխների: Դա սկսեց Մուղանի դաշտում՝ մտադրվելով գնալ դանի պալատի դեմ...»:

Պատմության մեջ մի քանի անգամ հիշատակվում է Խաչեն գավառը, որտեղ տեղի են ունեցել նշանավոր անցուդարձեր: Պատմիչը, խոսելով հզոր, արի իշխան Տարսայիճի մասին, գրում է. «Սա Վրաստանի թագավոր Դավթի ուղեկցությամբ գնաց Խաչենի գավառը, մեծ իշխան Ջալալի որդի Աթաբեկի մոտ և նրա քույր Սինա խաթունին իրեն կին առավ...»:

Բացի ռազմաքաղաքական, տնտեսական

կապերից, Խաչենի իշխանական տունը արևակցական-խնամիական կապերի մեջ էր Սիսական իշխանական տան հետ. «Բայց Գրիգորը, որը իշխում էր Բաղբուն, բերել տվեց Խաչենի իշխաններից, գեռաքարեցի մի կտրիճի՝ Հասան անունով, իր դուստր Կատային նրան կնության տվեց ու դարձրեց իր թագավորության ժառանգ»:

Պատմության մեջ քիչ չեն նաև այնպիսի աշխարհագրական անվանումները, որոնք մեր բազմադարյան պատմության ընթացքում տարբեր ժամանակներում եղել են և՛ Մեծ Սյունիքի, և՛ Փոքր Սյունիքի կազմում, կամ էլ ունեցել են սահմանազատիչ դեր: Այդպիսիք են Ծարը, Հաբանդի որոշ մասը, Աղահեճ գավառը՝ Քաշեթաղը ամրոցով և Խոժոռաբերդով, Մյուս Բաղբը, Աղավնո կամ Հագարի գետը և այլն:

Գրելով Աղվանքի սահմանների մասին՝ պատմիչը նշում է. «Առանձնացվում է նաև Աղվանքի սահմանը՝ Ոմբաձորը, Ծար գավառը, Աղահեճը, որը հատում է Աղավնո գետը՝ մինչև Քարավազի կամուրջը և Հաբանդ գավառը՝ մինչև Երնջակի սահմանի Բստիձորը՝ գրավված գողթնեցիների կողմից, նաև Վանաճոն ու Գողթնը ամբողջովին, որոնք թեպետ և՛ եպիսկոպոս ունեին, և՛ սահմանափակ տեղերի համար էլ դեռ կար, բայց ենթարկվում էր Սյունիքին»:

Հագարի գետի մասին պատմիչը գրում է. «Խաղաղ ու հավասար վայելումով էին ապրում Սյունաց իշխաններ Սմբատն ու Սահակը՝ միմյանց միջև բաժանած լինելով նահանգի իրենց հայրենի կավածքները. ավագը՝ Սմբատը, բաժին ուներ Սյունիքի արևմտյան կողմի մեծ մասն ու ամբողջ Վայոց ձորը, իսկ Սահակը՝ արևելյան կողմը, մինչև Հագարի...»:

Թվարկելով Սյունիքի բուն գավառները՝ Ստ. Օրբելյանը շեշտում է. «Հինգերորդը Աղահեճ գավառը, որ այժմ կոչվում է Քաշաթաղ և Խոժոռաբերդ»:

Պատմիչի մոտ շատ ուշագրավ են նաև արցախյան իշխանական տոհմերի, հոգևոր այրերի մասին վավերագրությունները, նրանց կատարածի, ծրագրերի, վարքի հիշատակումները:

Գրքի մեջ մի ամբողջ գլուխ՝ «Հակոբի ապստամբվելը և իր կյանքի վախճանը: Հայոց կաթողիկոս Անանիայի երեք անգամ Սյունիք գալը, Վահանի եպիսկոպոս ծեռնադրելը և Աղվանքի հնազանդեցնելը» վերնագրով, նվիրված է Աղվանքի Սահակ կաթողիկոսի, Սյունաց եպիսկոպոս Հակոբի եկեղեցական գործունեությանը, հայոց կաթողիկոս Անանիայի երեք անգամ Սյունիք գալուն և կենտրոնախույս ուժերի դեմ պայքարելու պատմությանը. «Ապա Աղվանքի կաթողիկոս Սահակը մեռնում է, և նրան հաջորդում է իր եղբայր Գագիկը՝ նույնպես անկատար օժոթյամբ: Տեր Անանիան այս իմանալով՝ Աղվանքի իշխաններին թուրք է գրում իր իմաստալից խոսքերով ու իրամայում չենթարկվել կաթողիկոս կոչված այդ սնափառ Գագիկին: Նրանց հենց այդպես էլ արեցին. նրան ոչ ոք չհնազանդվեց, բացի իշխաններից միայն մեկից՝ Սենեբերին անունով»:

Նույն գլխում նաև խոսվում է Սպրան անունով իշխանուհու մասին, որն ամեն կերպ ձգտում էր իր մերձավորներից մեկին՝ եպիսկոպոս Բակուրին դարձնել Աղվանքի կաթողիկոս. «Բայց չի համարձակվում ուղարկել Հայաստան, որ չներժեն, այլ ժողով է անում Պարտավում ու կաթողիկոս ծեռնադրել տալիս նրան, որը և անվանվում է Ներսես: Այդ պատճառով Եղիա կաթողիկոսն արքունի հրամանով գնում է Աղվանք և բռնելով այն տիկնոջն ու Բակուրին՝ մերկացնում, կապում է իրար ու իշվ վրա նստեցնելով՝ շրջել է տալիս Պարտավի փողոցներում»:

Հիշատակված է նաև Աղվանքի թագավոր Համամի անունը, որը փրկագնով ազատում է Գեորգ կաթողիկոսին. «Իսկ երբ Գեորգը Աղ-

վանքի թագավոր Համամի միջոցով վերադառնում է գերությունից, տեսնում է Հովնանին նրանց արքեպիսկոպոս և հրամայում է հանել նրա զգեստներն ու կաթողիկոսական նշանները»:

Մեկ այլ պատճառով նույն գլխում խոսվում է Աղվանքի իշխաններ Իշխանիկի ու Սենեբերի մի մասին. «Այս իմանալով, Աղվանքի իշխանները՝ Իշխանիկն ու Սենեբերինը, այլև մյուս Սենեբերինը՝ Գրիգորի որդին, որին նախօրոք հիշատակեցինք, Ջեվանշերն ու Գուրգենը, իրենց մեղքերը մեծ զղջմամբ խոստովանելով, Խոստակերաց վանքից Դավթին ուղարկեցին նրա մոտ՝ իրենց համար առաջնորդ ծեռնադրվելու»:

«Տաթևի շրջակա սահմանների վավերագրերը» գլխում ևս հիշատակվում են Աղվանքի հայրապետի և իշխանների անունները որպես վկաներ. «Մենք՝ Աղվանքի իշխաններ Գրիգորս, Եսայիս և Ատրնեսես, վկան ենք այս որոշմանը»:

Մեծ խանդավառությամբ ու դրվատանքով է խոսվում նաև Խաչենի իշխան Գրիգորի տոհմի մասին (ԿՁ գլուխ): Տարսայիճն իր ավագ աղջկան կնության է տվել. «Իվանե աթաբեկի քեռորդի մեծ Գրիգորի որդի Հասանի որդի Խաչենի մեծ ու փառաբանված իշխան Գրիգորին»:

Մեկ այլ տեղ (ՀԱ գլուխ) իշխան Ջալալի անունը հիշվում է՝ կապված փրկական փայտ-մատուցի հետ. «Չետո աստվածասեր Ջալալը շինում է Գիշերածոր անունով մի եկեղեցի և արծաթե պահարան պատրաստելով՝ հիշյալ մատուցը հաստատում է այնտեղ»:

Պատմության մեջ խորն ակնածանքով ու մեծարմամբ է հնչում Աղվանքի իշխան Սևադայի անունը, որի դուստրը Սիսական աշխարհի իշխան Գրիգորի կինն էր. «Գրիգորը իրեն կին է վերցրել ամենաօրինակ, խորահավատ բարեպաշտուհի Շահանդուխտին Աղվանից տնից, նրանց թագավորագն մեծ իշխան Սևադայի դուստրը»:

Հիշվում է նաև Սևադայի որդի Սենեբերի մի անունը, որն այդ ժամանակ թագավորն էր Սիսական աշխարհի, քանի որ Գրիգորն անգավակ էր. «Նրանք անգավակ էին, և թագավորությունը մնալու էր առանց ժառանգորդի: Ապա իշխանների հետ խորհուրդ անելով՝ Աղվանքից բերում են նույն Շահանդուխտի եղբայր, թագավորագն մանուկ Սենեբերինին՝ խիստ գեղեցիկ տեսքով, առողջ կազմվածքով, իմաստուն ու հանճարեղ, այլև աստծուց երկյուղած»:

Ամեն ինչից երևում է, որ Արցախի և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր թևերը սերտ հարաբերությունների, խնամիական, բարեկամական կապերի մեջ են եղել Սիսական տան հետ: Նրանց հուզել, մտահոգել են նույն խնդիրներն ու երևույթները և միշտ էլ ձգտել են հանդես գալ միասին:

Վերոհիշյալ վկայությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ Սյունիքի պատմության առթիվ անդրադառնալով նաև Արցախի պատմությանը՝ պատմիչը բավականին ուշադրություն է դարձրել Սենեբերինին՝ խիստ գեղեցիկ տեսքով, առողջ կազմվածքով, իմաստուն ու հանճարեղ, այլև աստծուց երկյուղած»:

Պատմությունն ինքնին ռազմավարական նշանակության երկ է՝ հետագա դարերի կտրվածք ճանաչողական ինքնության բարձրացման, աշխարհագրական տեղամուկների, սահմանների ճանաչման, հարևան ժողովուրդների հետ փոխհարաբերման, հայ ռազմական և դիվանագիտական մտքի ուսումնասիրման տեսանկյունից: Արցախի պատմության» համապատկերին նոր գիտական հետազոտումների նյութ է՝ որպես արդիական կարևորագույն խնդիր:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԴԱՎԻԹ ԽԱՉԱՏՈՒՅԱՆԸ՝ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՄԵՆԱՄԱՐՏԻ ՇԱՂԹՈՂ



Արցախի մարզիկ Դավիթ ԽԱՉԱՏՈՒՅԱՆԸ, ներկայացնելով Հայաստանի խառը մենամարտերի (MMA) ֆեդերացիան, հունվարի 27-ին մասնակցել է Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում կայացած GFP-1 (Georgian Fighting Promotion) կազմակերպության պրոֆեսիոնալ մենամարտերին: Ոգեւորիչ մենամարտի ընթացքում Դավիթը Խաչատուրյանը ապացուցել է իր գերազանցությունը եւ տակտիկական հմտությամբ հաղթել վրացի մրցակցին:

Դավիթը Խաչատուրյանը ծնվել է 1997թ. մայիսի 28-ին Երևանում: Մի քանի տարի հետո նրա հայրը՝ Շուշին ազատագրող Ազգային հերոս Աշոտ Խաչատուրյանը, աշխատանքի բերումով ընտանիքով տեղափոխվել է Ստեփանակերտ: Դավիթը սովորել է Ստեփանակերտի հ.2 հիմնական, ապա՝ 11-րդ ավագ դպրոցներում: Ավարտել է ԱրՊՊ մանկավարժության եւ սպորտի բաժինը: 2016-2018թթ. ծառայել է Արցախի Հանրապետության ՊԲ ԿՊՇ-ում: Դավիթը Խաչատուրյանը 2014թ. 37 մուայթայի առաջնության չեմպիոն է, սանդա ուշուի Արցախի չեմպիոն, Հայաստանում կայացած մուայթայի միջազգային մրցաշարի փոխչեմպիոն, 2016թ. MMA-ի 37 չեմպիոն:

Արցախի MMA-ի ֆեդերացիայի մարզիչ Դավիթ Խաչատուրյանը 2023թ.-ից աշխատում էր Ստեփանակերտի հ.1 դպրոցում՝ որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ:

Դավիթ, ինչպե՞ս սկսվեց Ձեր մարզական ուղին:

Փոքր տարիքից զբաղվում էի թանքվոնդոյով: Դեռ փոքր էի, երբ մայրս ինձ տարավ մարզական խմբակ: Մանուկ հասակից սեր ունեմ դեպի սպորտը: Որոշ ժամանակ թանքվոնդո պարապելուց հետո սկսեցի մուայթայ պարապել: Ինձ դուր է գալիս այդ մարզածեսն իր յուրատիպ կոպտությամբ, հատկապես որ կարող ես աշխատել ութ վերջույթով: Ավելի շատ նախապատվություն եմ տալիս պրոֆեսիոնալ մենամարտերին:

2016-ից հետո սկսեցի պրոֆեսիոնալ մարզվել խառը մենամարտեր MMA մարզածեսով մարզիչ Գարեգին Աղաբալյանի մոտ: Խառը մենամարտերը մարտական, ոչ օլիմպիական, ֆուլկոնտակտ մարզածես է, որում կարելի է ուղղահայաց ու հորիզոնական դիրքերում կատարել հարվածներ ու բռնվածքներ: Դա մարտարվեստ է, որում առկա են բռնցքամարտի, ըմբշամարտի, բրազիլական ջիու-ջիտսուի, ծյուդոյի, մուայթայի եւ այլ մարտարվեստների բաղադրիչներ: Մասնակցելով մրցաշարի եւ հռչակվելով 37 չեմպիոն ցանկություն ունեցա շարունակել իմ մարզական ուղին պրոֆեսիոնալ մենամարտերի գծով:

Շրջափակմամբ պայմանավորված սահմանափակումները հավանաբար վատ անդրադարձան Ձեր մարզական կարիերայի վրա:

Ցավոք, այո, քանի որ հնարավոր չէր մասնակցել Արցախից դուրս

կազմակերպվող պրոֆեսիոնալ մրցաշարերին: Ստեղծված պայմաններում մոտիվացիա գրեթե չկար, շուրջ մեկ տարի գրեթե չէի պարապում: Ճիշտ է, աշխատում էի ինձ վրա, որ չկորցնեմ մարզական լավ վիճակս, բայց մարզական կարիերայում հետընթաց ունեցա: Նույնը, սակայն, չի վերաբերում մարզական կարիերային, քանի որ նույնիսկ սննդի պակասության դեպքում մեր մարզիկները պարտաճանաչ հաճախում էին մարզումներին, իսկ ես ամեն կերպ ձգտում էի, որ պարապմունքները չդադարեն: Ցրվելու միակ միջոցն այդ ընթացքում թերեւս մարզումներն էին: Աշխատում էի դպրոցում որպես ուսուցիչ եւ միաժամանակ մարզական գործով զբաղվում:

Բռնի տեղահանվելուց հետո շուրջ երեք ամիս չէիք պարապում: Արդյոք, հե՞տ էր վերականգնել մարզավիճակը եւ պրոֆեսիոնալ մրցաշարի մասնակցել:

Տեղահանվելուց հետո որոշ ժամանակ չէի կարողանում պատշաճ ուշադրություն դարձնել սպորտին, քանի որ առաջնային խնդիրներ կային, որոնց լուծումը հետաձգել չէի կարող: Կատարում էի տարբեր աշխատանքներ, նույնիսկ՝ բանվորական, որպեսզի կարողանայի հոգավ առաջացած ֆինանսական խնդիրները: Հետո աշխատանքի ընդունվեցի Հերացու «Չինվորի տուն» վերականգնողական կենտրոնում՝ որպես հերթապահ կինեզիստ:



Մարզիչս՝ Գարեգին Աղաբալյանը, շարունակում էր մարզումները Հայաստանի խառը մենամարտերի (MMA) ֆեդերացիայում: Շուրջ քսան օր էր մնացել մրցաշարին, երբ նա ինձ հարցրեց, թե արդյոք կարո՞ղ եմ մասնակցել մրցաշարին: Ես համաձայնվեցի, բայց պետք էր ակտիվ ու անխնայ մարզվել: Այդ ընթացքը համընկավ ամառային արձակուրդի հետ, որի պատճառով մարզադասիչը փակ էր, այսինքն՝ մրցաշարին պատրաստվելու համար ստիպված էի մարզվել դրսում՝ մինչ մարզադասիչը մասնակցելու հնարավորություն կլիներ: Տարուց ավել էր, ինչ մրցաշարի չէի մասնակցել, քաշս պետք էր համապատասխանեցնել, մարզավիճակս՝ նույնպես: Ձմռան ցրտին դրսում մարզվելը հանգեցրեց նրան, որ առողջական խնդիրներ ունեցա: Իսկ պատրաստվելու ժա

մանակը քիչ էր: Մի պահ կասկածեցի, որ հնարավոր է չստացվի մասնակցելս, բայց բարեբախտաբար մրցաշարը հետաձգվեց մի քանի օրով: Հակաբիտիկներ օգտագործեցի եւ հասցրեցի վերականգնվել, աշխատել քաշիս վրա:

Պատմե՞ք մենամարտի մասին:

Հայաստանից Հանրապետությունից մասնակցեցիք երեք մարզիկ: Մեզ հետ էին մարզիչներ Գարեգին Աղաբալյանն ու Ստեփան Շահմուրադյանը: Պետք է մասնակցելի 66 կգ քաշային կարգում: Այնպես ստացվեց, որ այն մրցակիցս, որի հետ պլանավորված էր մենամարտս, մեկ օր մնացած հայտնեց, որ վնասվածքի պատճառով չի մասնակցելու մենամարտին: Շատ տխրեցի, հատկապես որ անխնայ պատրաստվել էի: Հետո վրացի մարզիկ գտնվեց, որը համաձայն

օգնություն ոչ միայն կոնկրետ բուժիչ ֆիզկուլտուրայի կամ այլ վերականգնողական վարժություններ կատարելու ընթացքում, այլ ընդհանրապես օգնություն նրանց վերականգնողական կենտրոնում գտնվելու ժամանակ: Նրանցից շատերը ինքնուրույն տեղաշարժվելու հնարավորություն չունեն կամ շարժվում են անվասայակի միջոցով, իսկ հերթապահ կինեզիստը պետք է օգնի նրանց: Բացի այդ, անհրաժեշտ է լավ անատոմիա իմանալ, հասկանալ, թե ինչպես է աշխատում մարդու հենաշարժիչ համակարգը, որպեսզի թյուրիմացաբար չվնասես հիվանդին: Սպորտով պարապելու ընթացքում բնականաբար ձեռք են բերվում թե՛ գիտելիքներ եւ թե՛ ֆիզիկական ուժ, ինչն էլ, անշուշտ, պետք է գալիս աշխատանքի մեջ: Իսկ ավելի շատ մոտիվացնում է այն հանգամանքը, որ թե՛ կենտրոնում աշխատող անձնակազմը, թե՛ բուժառուները ոգեւորված հետեւում էին իմ մենամարտին եւ ուրախ էին իմ հաղթանակի առթիվ: Ես էլ իմ հերթին ոգեւորված եմ, որ աշխատում եմ նման հաճելի մթնոլորտում եւ կարողանում եմ մի բան էլ ավել անել ու դրական հույզեր տալ իմ հաղթանակով:

Առաջիկայում շարունակելո՞ւ եք մրցաշարերի մասնակցել:

Հնարավորության դեպքում, իհարկե, շարունակելու եմ: Որոշ վնասվածքներ ունեմ, հիմա դեռ դրանք եմ հաղթահարում: Դրա հետ մեկտեղ հաշվառման թղթաբանության հետ կապված հարցեր կան, որոնք պետք է լուծել, որից հետո մտածել մրցաշարերի մասին: Օգտվելով հնարավորությունից շնորհակալական խոսքս եմ ուղղում իմ ընտանիքին: Շնորհակալություն, որ հավատացել եք իմ հաղթանակին: Կողքից ասում էին, որ կարճ ժամանակում պատրաստվելը կարող է ցանկալի արդյունք չտալ, բայց մայրս եւ եղբայրս հավատում էին ինձ: Շնորհակալություն եմ հայտնում մարզիչներ Գարեգին Աղաբալյանին ու Ստեփան Շահմուրադյանին, ինչպես նաեւ իմ սպորտային ընկերներին, որոնք «տանջել են» ինձ մարզումների ժամանակ, բայց այդպիսով օգնել մենամարտում հաղթելու համար: Նաեւ Աստուծո՛ւ փառք, որ ուժ եւ հաղթելու ոգի է տվել:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԱՐՑԱՒՅԻ ՄԱՐԶԻԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՄԱՐԶՎԵԼ ՆՈՐ ԹԱՓՈՎ

Մինչեւ 2023թ. չարաբաստիկ սեպտեմբերը «Լուսարար»-ը պարբերաբար անդրադառնում էր Արցախի մարզաշխարհի լուրերին, մեր մարզիկների կյանքին ու գործունեությանը, հետեւում նրանց մարզական անցուղարձին: Բռնի տեղահանվելուց հետո մեր մարզիկներից ու մարզիչներից շատերը տեղավորվել են Հայաստանի տարբեր մարզերում եւ փոքր-ինչ դադարից հետո փորձում են վերամիավորվել ու վերսկսել մարզական գործունեությունը: Առաջիկայում անդրադառնալու ենք նրանց՝ փորձելով պարզել, թե ինչ ճակատագրեր ունեցան մեր մարզիկներն ու մարզիչները եւ ինչպես են պատրաստվում



վերականգնել մարզումները նոր պայմաններում: Նախաձեռնությունը ողջունվեց, եւ առաջինը մեզ հետ

գրուցեց ավանդական կարատե-դոյի մարզիկ Նարեկ Բարսեղյանը: Ծնվել է 2007թ. օգոստոսի 28-ին Արցախի Այգեստան գյուղում: Սովորել է Ասկերանի եր. Բարսեղյանի անվան դպրոցում, հետո ընդունվել Շուշիի տեխնոլոգիական քոլեջ: Նարեկը վեց տարեկան էր, երբ Ասկերան քաղաքում բացվեց ավանդական կարատե դո մարտարվեստի խումբ: Նա տեսավ այդ մարտարվեստի պարապմունքները, ցանկացավ, որ ինքն էլ մարզվի: Շուտով սկսեց հաճախել պարապմունքների մարզիչ Տիգրան Գեւորգյանի մոտ, որը հանձն էր առել Ստեփանակերտում պարապմունքներ անցկացնելուց բացի Ասկերանի

երեխաների եւ պատանիների համար եւս ավանդական կարատեի մարզումներ անցկացնել: Մարզիչը, ինչպես որ վայել է Սենսեյին, սիրով ու հարգանքով է բնութագրում իր լավագույն սաներից մեկին. «Նարեկը պարտաճանաչ ու կարգապահ իմ այն մարզիկներից է, որոնք վաղուց ինձ մոտ գոհունակության ու հպարտության զգացումներ են առաջացնում: Երբ Ասկերանում ավանդական կարատե-դոյի խումբ բացվեց, Նարեկը եղավ ոչ միայն պարապմունքի հաճախող առաջին աշակերտներից մեկը, այլեւ իմ առաջին այն աշակերտը, որը հանձնեց սեւ գոտու քննություն եւ ստացավ առաջին դաս:

Սա առիթ էր, որ առանձնացնելի նրան, մեծավարի վերաբերվելի նրա հետ, այսինքն՝ ոչ միայն որպես սանի, այլեւ պահելի կողքիս, որ նա ինձ օգնի պարապմունքների ժամանակ եւ այդպիսով ավելի լավ սովորի ու տիրապետի ավանդական կարատեին: Տեսնելով նրա մեջ մեծ սեր եւ նվիրվածություն մարտարվեստի հանդեպ՝ մարզական գործով զբաղվելու հեռանկարներ էի նկատում նրա մեջ, այդ պատճառով էլ ձգտում էի, որ սովորի՝ ինչպես է պետք բացառիկ սկզբնական, և նրա համար հասանելի էի դարձնում կարատեի մարզական նրբությունները:

ԳՐԱԿԱՆ ԱՐՑԱՆ

Կիմ ՉԱՐԻՆԻԱՆ

ԱՐԿԸ ԽՓԱՆ ՏԵՂԸ ԶԻ ԽՓՈՒՄ

(Պատմվածք)



հարյուրամյակներ առաջ Ղիլիջ-Կիլիջ անունով մի բազկահաստ հայ սարալանջին հիմնել էր ապագա գյուղը ու այն իր անվամբ կոչել: Գետագայում ֆեյսբուքյան մի կրթոտ բանավեճից Գարսևանն իմացավ, որ Ղիլիջբաղը թուրքերեն կիլիջ-թուր բառարմատից է: Եվ երբ այս տարբերակը գյուղում սկսվեց շրջանառվել, բոլորը հանկարծ հիշեցին ու համաձայնվեցին, որ իրենց գյուղը միշտ էլ թրի մնան հատու է եղել ասպատակող վաչկատունների դեմ, դրա համար էլ հարթավայրի լեզվով սազացրել են տեղանունը:

Վանոն՝ ականջի մեկը խուլ, ունկաչափ հեռվից լսվող ինքնաձիգի համառ ճարձատյունին դիմադարձ մեկ հերց բարձր տենդրով վստահաբար հետ էր մղում խրամատ խուժող մահվան թանձր հոտը: Այդ դավադիր սպասման մեջ բջջային հեռախոսի զանգն անգամ լսելի չէր, մինչև որ զինվորական տաբատի գրպանը խուտուտ տվող անաղմուկ վիրբացիան չկսմթեց հեռախոսատիրոջը: Ջանգը, որ այս անգամ ավելի համառ էր, գյուղապետից էր: Գարսուն դժգոհ տազանապով հարցրեց՝ ի՞նչ է եղել: Գյուղապետն անքնությունից ու թերսնունմից խռպտված բատով ականջից դուրս գոռաց՝ գյուղը տարհանում ենք, վերևից հրահանգ կա: Խնդրածայն հրամայեց՝ դիրքերը կպահեք այնքան, մինչև վերջին մարդը դուրս կգա: Գետո տխրածայն հայիոյեց՝ տեղեկատվություն ունենք, որ ազրուական յաշման փորձում է ենթաշրջանի գյուղերը շրջկենտրոնից կտրել, շրջապատման մեջ առնել ու բնաջնջել տեղի հայերին:

Գյուղապետի տազանապ սպասելի էր, բայց ի՞նչ էր նշանակում բնաջնջել տեղացի հայերին... Ղիլիջբաղում յաշման, անգամ նրանց նախորդները երբեք ուղեջն էր: Նուբար հասին, էդ Ե՛րբ էր, պատմում էր, որ Նիկոլայ թագավորի թվին Աղդամից թուրքերի հարձակման ժամանակ իրենք փախել էին Արջածոր, իսկ տղամարդիկ մնացին ու թուրքերին հետ տվին: Նույնն էլ հիմա կլինի: Գարսուն գլուխը չբարձրացնելով՝ նայեց երկնքին, որտեղ շատ բարձրում, երևի Աստծուն մերձ տարածքում միակար դգզում էր անօդաչուն՝ տարօրինակ ձևով շարունակելով շանթեր չարձակել:

Գարսուն Վանոյի ծայրի հերցով հեռախոսի մեջ պոռթկաց.

- Խաչո՛, մեր ընտանիքներին տիրություն կանես, անվնաս կհասցնես Ստեփանակերտ: Մենք յաշմայի դեմը կփակենք: Լսո՞ւմ ես, Խաչո՛, մեր ընտանիքներին անտեր չթողնես: Խաչատուր, Խաչո ջան, ցավդ տանեն, եթե մեր ընտանիքներին բան եղավ, քեզ կրակի բերանն են տալու...

Գյուղի վրայի ճերմակ ամպագունդը քանուց, թե ինքն իր փոփոխների հետ անտորոն խաղալուց՝ ցրվեց, տարածվեց գյուղի վրա, ծածկեց արևի փոքրացող սկավառակը: Գյուղի ծայրերը խրամատներում լսելի չէին, բայց երբ հեռադիտակով բազմաչք տնտղեցին հարազատ փողոցները, խուճապ տեսան և քիչ էր մնում իրենք էլ խուճապի մատնվեին:

Գարսուն ավի մեջ մի բուռ հող առավ, մատների մեջ ձգմեց ու քսեց շուրթերին: Աշնան բուրմունք կար հողի խոնավության մեջ՝ խոտի, ծաղկի, կենդանի ծառարմատի: Լեզվի ծայրով հողը թացացրեց ու թքեց.

- Դիրքը լքող չլինի, չսպանվեք, մինչև մերոնք ապահով տեղ չհասնեն:

- Ո՛ւր պիտի հասնեն, Գարսո՛, թուրքն ամենուր է,- ականջը վիրակապտ ավով շփելով՝ հարցրեց Վանոն,- ինչի՞ են գյուղից դուրս գալիս, ո՞ւմ հրամանն է:

- Վերևի,- ուրքերի տակի քռեճները չարացած կոխկրտելով՝ ասաց Գարսուն,- վերևներից է հրամանը եկել:

Օդում անօդաչուի բզզոցը կարծես ուղիղ գլխավերևից էր: Վանոն նայեց բզզոցի ուղղությամբ, հայացքը գամեց մի կետի և աչքերով հենվեց դրան: «Վերևներից...», - ծոր տվեց անհասցե ու մտքերի մեջ միայնակ դեգերում էր:

Տարիներ առաջ երևանից արշավախումբ էր եկել իրենց գյուղ, հին խաչքարեր էին փնտրում: Նրանց ինքն ուղեկցեց մինչև Նահատակի սրբավայրը, ուր ամեն տարի աշնան սկզբին հավատացյալ գյուղացիներով գնում էին մատաղի: Ե՛րբ են նահատակվել, հանուն ինչի՞ ու ովքե՞ր են եղել նրանք՝ ոչ ոք չգիտեր: Նահատակի սրբավայրում մամռակալած, գունաթափ շիրմաքարեր շատ կային: Դրանցից մեկի վրայից մաքրեցին հողն ու մամուռը, կարդացին փորագիր գրությունը՝ ՌՋԻՋ: Գրածից, իհարկե, Վանոն բան չհասկացավ, ենթադրեց, որ դա որևէ ղիլիջբաղցու նախանախապապի գերեզմանն է, գուցե՛ն՝ իր նախա-նախապապի:

Ասաց՝ Գարսո՛, պատկերաց-

նո՞ւմ ես, մի երեք հարյուր տարի հետո մեր ծոռնեծոռները կգան, այս խրամատը կփորեն, մեր ոսկորները կգտնեն ու կասեն՝ մեր նախապապերն են այստեղ նահատակվել:

- Էշ-էշ դուրս մի տուր,- նրան խեթեց Գրիշիկը,- ինչի՞ պիտի մեր ոսկորները մնան այս խրամատում, ո՞վ է ասել, որ բոլորս այս խրամատում ենք թաղվելու: Գյուղում հանգստարան չունեն՞ք, ի՞նչ է:

Գրիշիկը գնդացրորդ էր, երկու եղբայր ուներ, որոնց Միշա և Յաշա անունները աղավաղելով՝ գյուղում Մեշոկ ու Յաշիկ էին անվանում: Վանոն զվարթ նայեց Գրիշիկին ու դարձավ Գարսևանին.

- Հիշո՞ւմ ես, Գարսո՛, ինտերնետում մի վիդեո կար, դու էիր ցույց տվել: Ե՛ն երևանցի տղան, որ խրամատում կրակում էր ու կողքին մի ասում՝ կայք ա, չէ՞, ասվեց:

- Կայք ա, Վանո՛, հեսա որ բեսպիլոտնիկը գլխիդ դմփացնի, իսկական կայք կլինի,- դարձյալ նրան խեթեց Գրիշիկը:

- Կուտի՛...,- Վանոն հերսոտ քրեց չեքը:

Գյուղի վրայի ճերմակ ամպը դանդաղ տարրալուծվել էր լազուրի մեջ, ու արևի փոքրացող սկավառակը կրկին սկսել էր շողալ: Արևի ծառագայթների միջից մի սև կետ պոկվել, տեսանելի լողում էր երկնի անհունում: Անօդաչուի բզզոցն ունկերի համար ավելի լսելի էր դարձել: Գարսուն գրահաբաճկոնի գրպանիկներից հանեց նռնակներն ու դրեց խրամեզրին:

Գետադիտակով այլևս չէր երևում նոսր անտառաշերտով ձգվող մեքենաների քարավանը. երևի տեղահանված համագյուղացիները յաշմայի մարտիկների կողմից չդիտարկվող սարալանջն արդեն անցել էին: Գարսուն զանգեց գյուղապետին, բայց վերջինս ոնց որ բջջային կապի ծածկույթից դուրս էր, զանգերը տեղ չէին հասնում:

- Տեղեկումի՞ դ մերը, - հայիոյեց մտքում, թեպետ բջջային օպերատորը դրամում մեղք չուներ: Թշնամու արկն անսպասելի ցատկեց իրենց գլխավերևով և պայթեց անհասցե մի տեղ: Բոլորը միանգամից կռացան՝ սկսվելով խրամատի մեջ: Գիտեին՝ հիմա կսկսվի ակամանետային կարկուտը, որն իսկապես չուշացավ:

Որոտների մեջ լսելի չէր անօդաչուի բզզոցը, և բոլորը հասկացան՝ բայրաքթարն ինչ-որ կարևոր հեռակետի խփել, հեռացել է:

Փոշին, քրտինքը, արյունը խառնվել էին իրար: Յաշմայի լայնաթիկունք ասկյարը միայնակ, աներկյուղ մտավ իրենց խրամատի մեջ ու դիմահար կրակեց Վանոյի վրա: Գարսուն փոշու և ծխի միջից տեսավ ազերի մարտիկի գայլային հայացքը. ինքնաձիգի փողն այդ ուղղությամբ էր արդեն, և առանց նշան բռնելու սեղմեց ձգանք: Լայնաթիկունք ասկյարն աղաղակելով՝ արնածոր դեմքով ընկավ խրամատի հատակին:

Գարսուն կանչեց տղաներին՝ պատասխանող չկար: Հասկացավ, որ աչ կողմից ևս ասկյարները խրամատ են խուժել և տեղում գնդակահարել նրանց: Մի ակնթարթում՝ աչք ճպելու ժամանակահատվածում, գնահատեց իրավիճակն ու արագ ցատկեց խրամատից դուրս: Ականջի մոտով գնդակ չսուլեց, հետևից սաստող կանչ չկար, դիմացը Դերուն տան ժայռափոր անձավն էր, որից նեղ անցուղի կար դեպի դիմացի ժայռը: Երեխա ժամանակ այդտեղ տարեկիցներով մարտական խաղեր էին բեմադրում: Գարսուն անցուղիով սողեսող դուրս եկավ, շնչակտուր վազեց դեպի գյուղ:

Գյուղն ամայի-դատարկ էր, և միայն Նուբար հասու չալ կատուն դժգոհ մկավոցով դիմավորեց նրան: Գարսուն կատվին հայիոյանքով փոխադարձելու տրամադրություն չունեց, և Նուբար հասու կատուն պոչով դժգոհ հրաժեշտ տալով՝ ուրվականի պես միանգամից անհետացավ: Շատ բարձրում, երևի Աստծուն մերձ տարածքում, դեռևս միակար դգզում էր անօդաչուն: Գետում, սարի մագոտ ուսին ոչ այն է՝ ծուխ, ոչ այն է՝ ամպի նոսր ծվեճներ կային, և Գարսուն ուղղվեց դեպի այդ ծուխը: Վստահ գիտեր՝ արկը խփած տեղը չի խփում:

Գետում խրամափոսի վրա, անձավային խոնավ լռություն էր ծանրացել: Գարսուն ինքնաձիգի պահունակը ստուգեց ու տեսավ, որ պահունակում փամփուշտը վերջացել է: Առանց երկար մտածելու ինքնաձիգը նետեց այդ լռության անձավի մեջ, որովհետև հանգված էր՝ դարեր, թե հարյուրամյակներ հետո, երբ Տեփնանց տափում պեղումներ կատարեն, անթաղ մնացած լռությունը պատմելու շատ բան կունենա:

Գրպանի մեջ բջջային հեռախոսը մարտկոցի վերջին շնչով կսմթեց նրա հոգնած ազդրը, բայց Գարսուն անհաղորդ մնաց գանգին: Նա ոչ ոքի ասելիք չունեց...

ԳԵՂԱԴԻՏԱԿ

Համլետ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԱՅ արվեստի վաստակավոր գործիչ

ԿՏԱՎԸ՝ ՅՈՒՐԱՆԱՏՈՒԿ ՁՈՆ ՄԱՅՐԵՐԻՆ

19-րդ դարի 80-90-ականներից սկսած՝ հայկական գեղանկարչությունը սրընթաց վերելք ապրեց: Եվ դա առաջին հերթին շնորհիվ այն բանի, որ ասպարեզ էր մտել մեծատաղանդ գեղանկարիչների մի աստղաբույլ (Մարտիրոս Սարյան, Գևորգ Բաշինջաղյան, Եղիշե Թադևոսյան, Փանոս Թերլեմեզյան, Վարդգես Սուրենյանց, Ստեփան Աղաջանյան, Հմայակ Արծաթաբանյան, Վահրամ Գայֆեճյան), որոնք կրթություն էին ստացել Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության, ճարտարապետության ուսումնարանում, Մյունխենի, Սանկտ-Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայում՝ որպես ուսուցիչներ ունենալով ամենահայտնի վարպետներին (Վ. Սերով, Մ. Կլոդո, Վ. Պոլենով, Ժ. Պ. Լորան և ուրիշներ) և հնարավորություն ունեցան իրենց արվեստը զարգացնել Ֆրանսիայում (բացի Հմայակ Արծաթաբանյանից ու Վահրամ Գայֆեճյանից): Հիշյալ գեղանկարիչներից ոմանք կրթվել են նաև համրահայտ ժուլիեն ակադեմիայում, Գեղեցիկ արվեստների դպրոցում: Իսկ Ֆրանսիան՝ Փարիզը, այդ ժամանակ արվեստագետների յուրօրինակ Երուսաղեմն էր. աշխարհի չորս ծագերից Փարիզ էին գալիս գրողներ, նկարիչներ, քանդակագործներ, բոլոր նրանք, ովքեր ինքնուհուստավելու, կայանալու նպատակ ունեին: Բնականաբար անհնար էր չյուրացնել ֆրանսիական արվեստի ձեռքբերումները՝ շփվելով Մոդիլիանիի, Մանեի, Մոնեի, Ռոդենի, Ռենուարի և մյուս մեծությունների ու նրանց արվեստի ծես: Ուստի պատահական չէ, որ իմպրեսիոնիզմը հայկական գեղանկարչություն մուտք գործեց շնորհիվ Եղիշե Թադևոսյանի արվեստը: Իսկ Ստեփան Աղաջանյանի արվեստը էթե մեկ նախադասությամբ բնութագրելու լինենք, հայ-

կական կերպարվեստի պատմության մեջ այն է, որ հայկական ռեալիստական նկարչությունն ու դիմանկարչությունը հասցրել է զար-



կացման մոր աստիճանի: Նրա լավագույն կտավներից մեկն իրավամբ համարվում է «Մոր դիմանկարը»:

Ինքը՝ գեղանկարիչը, եղել է դերձակի որդի: Ծնվել է 1872 թվականին: Կրթություն է ստացել Շուշիի թեմական դպրոցում, ռուսական ռեալիստական ուսումնարանում, ապա մեկնելով Ֆրանսիա՝ սովորել է Մարսելի նկարչական ստուդիայում, Փարիզի համրահայտ ժուլիեն ակադեմիայում: Ստեփան Աղաջանյանը օժտված էր բնորոշ ներաշխարհը տեսնելու, վեր հանելու բացառիկ կարողությամբ: Հենց դա էլ մշտապես ձգտել է պատկերել իր կտավներում: Ֆրանսիայից վերադառնալով՝ ապրել է Շուշիում, հետո՝ Բաքվում, Դոնի Ռոստովում՝ դպրոցներում դասավանդելով գեղանկարչություն: Անցյալ դարի 20-ական թվականներից բնակվել է Երևանում: ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ է: Բազմաթիվ հետաքրքիր և հուզիչ կտավներ ունի, որոնցից մեկը ներկայացնում ենք հոդվածին

կից: Պատկերված է գեղանկարչի խորթ մայրը, որի անունը Մինա էր:

Հակառակ գոյություն ունեցող տեսակետի, թե գեղանկարչին հուզել է իր մոր գեներտիկորեն խորթ լինելու փաստը, հակառակը, մարդկայնորեն շատ հարազատ էր, և հենց այդ գաղափարն էլ ընկած է նկարի հիմքում: Կարծում ենք՝ դա այդպես չէ, և հարկ չկա արվեստում ստեղծագործության ասելիքը անձնականացնել:

Ստեփան Աղաջանյան գեղանկարչին հետաքրքրել է առհասարակ մայր երևույթը: Ուստի նա մորը կերպավորել է շուշեցու տարազով, միջին դասի կանանց բնորոշ հագուկապով՝ ոչ միայն կոլորիտի ապահովման, այլև ցույց տալու համար այն միջավայրը, որում ժամանակին ապրել է իր մայրը: Իսկ մայրը նստած է սեղանի մոտ, ձեռքերի մեջ տերողորմյան բռնած: Իբրև առարկա, այն շատ գործածական էր 19-րդ դարավերջի հայ կանանց կողմից: Կտավում մենք տեսնում ենք պարկեշտ, համեստ, առաքինի, հեզաբարո, բարեհոգի կնոջ: Կտավում լուսավորված են նրա դեմքի մի մասը և ձեռքերը. հենց դրանք են գեղանկարչի համար եղել առաջնային: Ձեռքերը՝ տանջված, հազար ու մի դժվարություն տեսած: Դեմքը անժպիտ է, զուսպ, սակայն ուշադիր դիտելու դեպքում կնկատենք, թե ինչքան բարություն կա նախապետական կնոջ այդ տիպական կերպարում:

Մայրը համար է նրա ապրած ոչ ոյուրին կյանքը, ինչի վկայությունն են կնճռոտ ձեռքերը: Եվ ձեռքերի կնճիռները հաստատում են այդ կնոջ չարաբանքով ապրած կյանքը: Այդ կյանքը ցույց տալու համար է գեղանկարիչը մոր ձեռքին դրել տերողորմյան: Միևնույն ժամանակ այն մեզ հուշում է կնոջ սոցիալական դասը, կարգավիճակը, ինչին նա հասել է անդադրում աշխատանքի ու մեծ մաքառումի գնով: Կտավի ետին պլանը, ֆոնը զարդարում է հայկական գորգի մի ֆրագմենտ, ինչը կտավին շքեղություն և ազգային կոլորիտ է հաղորդում: Սեղանի ծածկոցը նույնպես այդ նպատակին է ծառայում:

Գեղանկարիչներից շատերն են վրձնել իրենց մոր դիմանկարը, որոնցից մեկն էլ ամերիկացի Ջեյմս Էբորտ Մաք-Նեյլ Ուիստլերն է (1834-1904թթ.), որի հիշյալ ստեղծագործությունը հայտնի ու սիրված է աշխարհում: Ջեյմս Ուիստլերի

է մոր և որդու միջև և կարևորելու համար հեռուներին հառած մոր մտահոգ հայացքը: Այդ նույն մտահոգությունը առկա է նաև Ստեփան Աղաջանյանի կտավում: Բայց հայ գեղանկարչի նկարում, կարծում ենք, մոր դիրքի ընտրությունը շատ ավելի սրտամոտ ու հարազատ է, քանի որ մայրը նայում է դեպի մեզ՝ կտավը դիտողներին և լավագույնս է ներկայացնում մայրական սիրո բացառիկությունը, մոր կերպարի խորքայնությունը:

Ուշադիր նայելու դեպքում կնկատենք, որ գեղանկարչի մայրը բնավ էլ մեզ չի նայում, ինչպես որ թվում է առաջին պահ, նա մեր ուսի վրայից նույնպես մտախոհ նայում է դեպի հեռուն, ուր ապագան է, վաղվա օրը՝ անորոշությամբ լի: Եվ հենց այստեղ է հայ գեղանկարչի ընտրած կոմպոզիցիայի յուրահատկությունը. նույնիսկ մեր ներկայությունն ի գործ է գեղանկարչի մորը կտրելու մշտաբուն մտորումներից: Կինը, որ ամբողջ կյանքում մաքառել է, բազում անբուն գիշերներ լուսացրել, որպեսզի կարողանա պահպանել իր գերդաստանի քիչ թե շատ բարվոք կյանքը, այդ տարիքում էլ անհանգիստ ու մտահոգ է գերդաստանի վաղվա օրվա համար: Գեղանկարիչ Ստեփան Աղաջանյանը մոր կերպարը դիտելով որպես մարմնավոր ու հոգևոր բացառիկ միասնություն՝ կտավը դարձրել է յուրատեսակ հուշարձան, ձոներձ՝ նվիրված մայրերին:

Իբրև ամփոփում՝ մենք, որ հայ գեղանկարիչների շատ կտավներ կոմպոզիցիոն կառուցվածքով, ասելիքի խորքայնությամբ ու կերպարի հոգեբանությամբ ճշգրիտ ցուցադրմամբ բնավ չեն գիշերում աշխարհում ճանաչված շատ գեղանկարիչների նմանատիպ կտավների: Ուղղակի դա տեսնել ու գնահատել է պետք:



կտավում մայրը նստած է կիսադեմով: Գեղանկարիչն իր մորն այդ դիրքով է վրձնել՝ ընդգծելու համար այն մեծ տարածությունը, որ ընկած

ԱՐՑԱՆՑԻ ՄԱՐԶԻԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՄԱՐԶՎԵԼ ՆՈՐ ԹԱՓՈՎ

Ինքն էլ դրանով ավելի էր պատասխանատու դառնում: Եղել է դեպք, որ չեն կարողացել ներկայանալ պարապմունքի հարգելի պատճառով, կամ մինչև պարապմունքի հասնելու երկար ճանապարհին էի հաղթահարում՝ տեսնում էի, որ Նարեկն արդեն մարզադահլիճի դուռը բացել է, խուճըր շարել, նախավարժանքն սկսել: Կարատեում մարզչի օգնականը կոչում է, որին ոչ բոլոր մարզիկները կարող են արժանանալ, իսկ Նարեկը լիարժեք կարող էր կրել Սեմպայի կոչումը: Մեր մարզիկների ծնողներից հաճախակի էի Նարեկին ուղղված գոհունակության խոսքեր լսում: Շրջափակման ժամանակ Ասկերանից բացի նաև Ստեփանակերտի իմ խմբերում էր որպես սեմպայ աշխատում մարզիկների հետ: Շուրջ հիսուն մարզիկ ենք միասին մարզել

Ստեփանակերտում: Վառելիքի բացակայության պայմաններում, երբ սուղ էին տրանսպորտային միջոցները, Նարեկը կարողանում էր մի ելք գտնել ու Ասկերանից գալ Ստեփանակերտ՝ իր մեծ ցանկությամբ մարզիկների հետ աշխատելու համար:

Նարեկ Բարսեղյանը ավանդական կարատե դո մարտարվեստի Արցախի չեմպիոն է, մեդալակիր ու գավաթակիր, ՀՀ երկակի չեմպիոն, մեդալակիր, գավաթակիր:

Մարզիչն ասում է, որ Հայաստանում մասնակցած մրցաշարերից Նարեկը վերադառնում էր որեւէ մրցածեւում էթե ոչ առաջին, ապա անպայմանորեն մրցանակային տե-

ղով: Եվ որպես կարատեիստ է լավը՝ համեստ, հավասարակշռված,

ցող անձնավորություն է: Նարեկի հետ գրույցի ժամանակ պարզեցինք, որ բռնի տեղահանվելուց հետո բնակվում է Հայաստանի Գեղամիստ գյուղում, որտեղից հնարավորություն է գտնում գնալ մարզումների «Մալաթիա»-ում Տիգրան Գեւորգյանի կողմից բացված ավանդական կարատե դոյի մոր խմբում: Շարունակելու է օգնել մարզչին սկսնակ մարզիկներին ավանդական կարատեի հնարներն ու նրբությունները փոխանցելու հարցում, ինչպես նաև մոր թափով է վերսկսելու իր մար-



ելու է օգնել մարզչին սկսնակ մարզիկներին ավանդական կարատեի հնարներն ու նրբությունները փոխանցելու հարցում, ինչպես նաև մոր թափով է վերսկսելու իր մար-

զումները: Այն հարցին, թե ինչ խնդիրների է հանդիպում սպորտի ոլորտում, նպատակալաց մարզիկը պատասխանում է, որ խնդիր չկա, հակառակը՝ կարատեն ու դրանով պարապած լինելն օգնում են, որ ավելի հեշտ հասնի իր առջեւ դրված նպատակներին: Ցանկանում է ըլլեցն ավարտելուց հետո մտնել ծառայության որպես փրկարար: Մարզված լինելը թույլ է տալիս լավագույնս դրսևորել իրեն փրկարարական բարդ ու պատասխանատու գործում: Իսկ որպես նպատակների հանրագումար՝ Նարեկը մշում է համախմբվածությունն ու միասնականությունը, որի շնորհիվ կիսադոլի ջախջախել թուրքին ու հնարավորություն կլինի վերադառնալ մեր տները:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՄՆԱԳԻՐ՝ «ԼՈՒՍԱՐԱՐ» ԿՐԹԱՄՋԱԿՈՒՐԱՅԻՆ ՀՎ

Ֆոն: 097-22-38-27
E-mail: gorcort@mail.ru: www.lusarar.info

Մեքերումների և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է «Լիմուշ» ՍՊԸ տպարանում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Տպաքանակ՝ 500
Ստորագրված է տպագրության՝ 12.02.2024թ.: